Հ. Յ. Դ.
ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ

# Դրօշակ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

1904

№ 11 (152) XIV ՏԱՐԻ ՆՈՅԵՄԲԵՐ 1904

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԴՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

## ՊԼԷՎԷԻՑ ՅԵՏՈՅ

Այն յանկարծակի և զօրեղ ցնցումը, որ առաջ բերեց կառավարչական շրջաններում Պլէվէի մահուան պատիժը, մի անգամ ևս նորոգեց ռուս հասարակութեան վաղեմի յոյսերն ու երազները։ Արմատական փոփոխութիւնների պահանջ դրին ոչ միայն վաղուց յայտնի „կասկածելի" տարրերը, ոչ միայն Սուվօրինի պէս հողմացոյցները, — ազատութեան և արդարութեան մասին բարբառել սկսան և մինչև ոսկորների ծուծը պահպանողական Մեշչերսկիները։ Ինքը՝ Սվեատօպօլկ Միրսկին՝ մայր Թագուհու և Պօբէդօնօսցեվի բովով անցած չինօվնիկը, նոյնպէս շտապեց մարդասէր բաղձանքներ յայտնել, հպատակ ազգերի, օտար դաւանութիւնների հաւասարութեան մասին ճառել։ Նա նոյնիսկ իր վստահութիւնը յայտնելու շնորհն արաւ այն հասարակական ուժերին, որոնց ջանքերը տասնեակ տարիների ընթացքում խեղդւում էին անխնայ, անողոք։ Խօսում են շատերը, խոստովանում, շեշտում են, որ Ռուսաստանը չի կարող ներկայ րէժիմի տակ մնալ. բարի դիտաւորութիւններ ամէն օր լսւում են, բայց և այնպէս ամիսներ են անցնում, և իրերի դրութիւնը նոյնն է մնում։ Եւ իսկապէս, ի՞նչ է կատարւել Պլէվէի չքանալու օրից ի վեր։

Նոր մինիստրի ամենից շատ աչքի ընկնող քայլն այն էր՝ որ նա թոյլ տուեց „զէմստվօների" ներկայացուցիչներին համախմբւել և խորհել այն միջոցների մասին, որոնցով կարելի է թեթևացնել պատերազմ քշւողների դառը վիճակը։ Բռնապետութեան ներկայացուցիչը բարեհաճեց արտօնել, որ ժողովրդի ներկայացուցիչները հոգ տանեն այն անհամար ընտանիքների մասին, որոնց աշխատաւոր ուժերը 10, 30, 50 հազարներով զոհ են գնում նոյն բռնապետութեան սպանիչ քաղաքականութեան։ Եւ սա համարւում է մի բարիք, մինիստրական մի շնորհ, որ անւում է ժողովրդին... Աքսորից վերադարձան մի երկու անմեղներ, բայց հազարաւորները դեռ մնում են հայրենի օջախից կտրւած։ Շլիւսէլբուրգի դռները բացւեցին. յեղափոխական հին մարտիկներից դուրս բերին 3 կմախքներ, բայց աքսորեցին հիւսիսային մի յետ ընկած նահանգ։

Ֆինլանդացիներին խոստում եղաւ՝ նրանց արտօնութիւնների կրճատումը դադարեցնել, բայց շա՞տ բան է մնացել կրճատելու։ Բացառիկ օրէնքները ևս պէտք է վերանան, երբ... ֆինլանդական ժողովուրդը փոխած կը լինի իր զգացմունքը դէպի իր վեհապետը։ Իբր թէ յարգելով ֆինլանդական հիմնական օրէնքները, Պլէվէի տեղ պետական քարտուղար նշանակեցին մի ֆինլանդացի, որին ժողովուրդը ատելով ատում է իր ռուսամոլութեան համար։ Եւ այս բոլորի հետ միասին նոր մինիստրը նշանակեց գրաքննութիւն, որին պէտք է ենթարկւեն Ֆինլանդիայում հրատարակւող բոլոր գրքերը։

Լեհացիների վերաբերմամբ ևս շատ անուշ խոստումներ արւեցին։ Դրա արդիւնքը եղաւ առայժմ այն, որ ազատամիտ մինիստրը կարողացաւ լեհ ազնւականներից մի քանի տասնեակ հոգի քարշ տալ դէպի Եկատերինա II-ի մահարձանի բացման հանդէսը, այն Եկատերինայի, որ սկիզբը դրեց Լեհաստանի բաժանման։ Եւ միւս կողմից նա այնպիսի խստութիւններ գործ դրեց Լեհաստանի զանազան կողմերում տեղի ունեցած բանւորական ցոյցերի ժամանակ, որ ի վերջոյ գործը հասաւ արիւնահեղ ընդհարումների, որոնց վկայ եղաւ Վարշաւան վերջին օրերս։

Դէպի հրէաները նոր մինիստրը նոյնպէս լաւ տրամադրութիւն ունի, միայն վախենում է նրանց տալ այն „արտօնութիւնները", որ „վայելում" է բուն ռուս ժողովուրդը, չլինի թէ երես առնեն... Առայժմ նա ուզում է հրէայ ուսանողների վերաբերմամբ սահմանած տոկոսը բարձրացնել և, բացի այդ, նոր „պօգրօմների" դէպքերում թոյլ չտալ ռուս ամբոխին սպանութիւններ գործել, այլ միայն կողոպտել, թալանել, ծեծել։

Հայերին էլ հասաւ նոր մինիստրի սփռած „բարիքներից": Լուր տարածւեց, որ յափշտակւած կալւածները յետ պիտի տրւեն և հայերի հետ հաշտութիւն պիտի կայանայ. այս աւետիսի հիմքը ծառայել է մայրաքաղաքի մի թերթի լուրը, թէ Սիմֆերօպօլի հայոց դպրոցի կառավարչութիւնը նորից յանձնւած է հայ հոգևորականութեան։ Այժմ պարզւում է, որ այդ քայլը արւած է լոկ այն պատճառով՝ որ տեղական աղքատիկ եկամուտներով անկարելի է եղել կառավարել դպրոցը։

Իսկ միևնոյն ժամանակ հայ աքսորականների բազմաթիւ շարքեր, որոնց մէջ վերջերս և զաւակների տէր կանայք, տանում ցրւում են Ռուսաստանի ներքին նահանգներում, առանց դատի, առանց քննութեան։ Նոր ռուս գաղթականներ շարունակում են քշել Կովկաս՝

բնակեցնելու համար այն վայրերում, ուր իրենք տեղացիք սակաւահողութիւնից ստիպւած են գաղթել։

Միմիայն Ռուսաստանում և այն էլ պլեվեական ռեժիմից յետոյ կարելի է այս տեսակ փոփոխութիւններին կարեւորութիւն տալ, նրանցով մխիթարուել և նրանց հիման վրայ ապագայի յոյսեր տածել։ Եթէ նոր մինիստրի օրով իրօք մի բան փոխւում է, դա ռեժիմը չէ, դժբախտաբար, այլ տրամադրութիւնը այն չափաւոր կոչւած տարրերի, որոնք մօտեցել էին յեղափոխական շրջաններին՝ Պլեվէի ոստիկանական իշխանութեան օրերում։ Սվեատօպօլկ Միրսկու մի քանի „ազատամտական" ցոյցերից յետոյ, այդ տարրերը նորից սկսում են հակւել դէպի կրաւորական դեր։ Մինչդեռ հէնց նրանք, որ անձնապէս լաւ ծանօթ են ռուս բռնակալութեան պատմութեանը, պէտք է գիտակ լինեն, որ նեղն ընկած կառավարութեան համար բոլոր անորոշ խոստումները, բոլոր անուշ խօսքերը միմիայն օրօրներ են, որոնցով նա ձգտում է ժամանակ շահել՝ իր դիրքը ամրացնելու յուսով։

Ուրիշ դիրք չի կարող բռնել մի կառավարութիւն, որ պատերազմի պատճառով պատռւած է տեսնում իր քողը և իր վարկը հիմնովին կորած աշխարհի աչքին։ Հաշտարար ոգի պէտք է ցոյց տայ նա, երբ տեսնում է, թէ ինչպէս եապօնական զէնքի աջողութիւնները ցնծութեան աղաղակներով են ողջունւում ոչ միայն հպատակ ազգերը, այլև բուն ռուս շրջանները։ Ուրիշ ի՞նչ կարող է նա անել, երբ մի քանի նահանգներում սով է տիրում, որ սպառնում է տարածւել ամբողջ երկրի վրայ. երբ պատերազմ քշւողների և նրանց ազգականների լացն ու կոծը կամաց կամաց փոխւում են սպառնալի կոչերի, երբ պահեստի զինւորները հազարներով փախչում են արտասահման, կամ մնալով ներսը՝ պատրաստւում են դիմադրութեան։ Վերջապէս ուրիշ լեզու չի կարող բանեցնել մի մինիստր, որի աչքերի առջև միշտ ցցւած են իր երկու նախորդների ուրւականները։ Նա որ տեսել է Սիպիագինի գետնաթաւալ դիակը, որ վկայ է եղել Պլեվէի մարմնի քրքրւած մասերը փողոցի զանազան անկիւններից ժողովելիս, նա բնականաբար ուրիշ երգ պիտի երգի, ամենաբարի տրամադրութիւններ պիտի ցոյց տայ և աջ ու ձախ յոյսեր ներշնչի։

Չպէտք է մոռանալ միևնոյն ժամանակ, որ որքան էլ իրօք ազատամիտ լինի ինքը Սվեատօպօլկ Միրսկին, նա բռնակալութեան ներկայացուցիչն է, նրա կողմից ընտրւածն է, ուրեմն նրա շահերի պաշտպանն է կոչւած լինելու, և ոչ միայն նրա, այլև նրա թևի տակ զօրեղ դիրք հաստատած կամարիլլայի։ Իսկ սա դեռ իրեն դ ր ո ւ թ ե ա ն տ է ր է համարում, իր օրգաններում ըստ առաջնոյն շանթեր է թափում „խռովարարների" գլխին։ Պօբէդօնօսցէվ կոչւած ճիւաղը յարմար րոպէի է սպասում իր գլուխը բարձրացնելու և ճանկերը պարզելու։ Առաջին անգամը չէ սա։ Առաջներում էլ միապետութիւնը նեղ տեղն է եղել, խռովարարները նոյն ճառերն են ասել և աւելի համարձակ ճառեր։ Առաջներում էլ կամարիլլան մի որոշ ժամանակ խոհեմութիւն է ունեցել քաշւած մնալու։ Բայց հէնց վտանգը անցել է, նա նորից թև է առել և վամպիրի նման պինդ կպել ժողովրդի ցամաքած մարմնին։ Այսպիսի պարագաներում ճարպիկ մինիստրի դերը պէտք է կայանայ նրանում, որ երկդիմի յայտարարութիւններ անի, խօսել տայ դրանց մասին, ոչ մի դրական խոստում չանի, ոչ մի որոշ ձեռնարկ չիրագործի։

Բայց կարո՞ղ է այսպէս շարունակել և որանից յետոյ.— Իհարկէ, ոչ։ Խոստում-պռոստ միջոցները չեն գոհացնելու ոչ ընդդիմադիրներին և ոչ կամարիլլային, որը արդէն ամէն տեսակ ինտրիգներ է լարում՝ իր նախկին ապահով դրութիւնը վերականգնելու համար։ Մենք վախ չունենք այլեւս, այս անգամ՝ նա աջողութիւն չի գտնի։ Նրա ամէն մի փորձը այդ ուղղութեամբ աւելի զարկ կը տայ յեղափոխական գործին։ Արդի յեղափոխական միջավայրը մի 20 տարի առաջ եղած սահմանափակ շրջանը չէ, որ բռնակալութիւնը կարողանայ ընդգրկել, խեղդել իր տարածած ցանցի մէջ։ Բռնութեան ուժը այլևս չի պատի՝ ճնշելու գիւղացիական և բանւորական լայն կազմակերպութիւնները, որոնք ձգւում են Արաքսի ափերից մինչև Ֆինլանդիայի ժայռերը։ Դրանց վրայ պիտի լինի նոր Ռուսաստանի յոյսը..

Այսօր զէմստվօների ներկայացուցիչները ռէֆօրմների ծրագիր են մշակում, պահանջում են ընտրողական ամենալայն իրաւունք, խօսքի, մամուլի, գումարումների ազատութիւն. բայց կասկած չկայ, որ այս բոլորի դէմ „ազատամիտ" մինիստրը — եթէ մնայ պաշտօնում — իր կողմից մէջ պիտի ձգէ իր սեփական ծրագիրը, թէկուզ հէնց այն, որ լոյս տեսաւ արդէն եւրոպական մամուլի մէջ. ամբողջ Ռուսաստանը նա պիտի բաժանի 16 մեծ շրջանների, որոնք պիտի ընտրեն մի մի պատգամաւոր. բոլոր ընտրւածները՝ կառավարութեան կողմից նշանակւած 16 անդամների հետ միասին՝ պիտի կազմեն մի մարմին, այն էլ խորհրդակցական։ Եւ եթէ գործը թողնել միայն զէմստվօների ներկայացուցիչներին, ամենաբարեաջող դէպքում նա կը յանգի անվերջ սակարկութիւնների։

Առաջնորդւած այն իրողութիւնով, որ կառավարութիւնը զիջումներ անելու ձևեր է ցոյց տալիս յեղափոխական հարւածների ազդեցութեան տակ՝ կազմակերպութիւնները պէտք է միջամտեն աւելի մեծ թափով և հասցնեն նրան իրական զիջումների։

Ինչպէս գարնանային առաջին որոտը, որ գալիս է ցնցելու ձմրան կապանքները — Սազօնովի ռումբի գոռոցը կեանքի ու շարժման յոյսեր սփռեց լայնատարած Ռուսաստանում։

Բայց մի որոտով „գարուն" չի բացւում...

# ԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՊԱՍՈՂ ՊԱՀԵՍՏԻ ԶՕՐԱԿՈՉԻ ԱՌԹԻՒ

## (ՌՈՒՍ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ)

*Հատուցման ժամը հասաւ...*

*Ռուս արիւնարբու կառավարութիւնն իր դէմ այժմ ունի ոչ թէ իր խաղաղ, անզէն, անզօր ժողովուրդը, որի հետ վարւում էր զզւելի քմահաճոյքով, նեղելով, կողոպտելով, նոյնիսկ խմբական կոտորածներ կազմակերպելով, այլ իր դէմ ցցւած մի հզօր թշնամի՝ Ճապօնիան, որ շնորհիւ իր ազատ քաղաքական կազմակերպութեան՝ լինելով աւելի ընդունակ, աւելի քաղաքակիրթ և պատրաստւած, անընդհատ հարւածներ է թափում ռուս բանակի գլխին, որին առաջնորդում են ռուս պետութեան մահաբեր կառավարչական սիստէմի իսկական պտուղները՝ բթամիտ զօրապետները: Ճապոնիայի յաղթական ընթացքի առաջ ռուս կառավարութեան ուժերը քամւում են և նա ստիպւած է դիմել նորանոր զօրակոչի այս կամ այն նահանգում, ստիպւած է թափել իր վերջին ճիգերը:*

*Կառավարութիւնը կամեցաւ զօրակոչ անել և Լեհաստանում: Վարշավայի ոստիկանապետը յունիսի 3-ին կոչ արեց բոլոր պահեստի զինւորներին՝ ներկայանալու որոշւած տեղը փորձի համար: Բայց չարաչար սխալւեց: Ոչ մի զինւոր չ'երևաց այդ օրը նշանակած տեղը. իսկ յունիսի 22-ի և 23-ի բանւորական ցոյցերը պարզեցին լիրբ կառավարութեան՝ թէ Լեհաստանից ոչ մի պահեստի զինւոր չի գնալու և նա լռեց: Իսկ այժմ, նա իր լրբութեան մէջ այնքան է անխելքացել, որ մտածում է զէնքի կանչել պահեստի ուժերը Կովկասից, այն Կովկասից, որին տարիների ընթացքում նա շարունակ խաբել, վիրաւորել, անարգել է... Նա յանդգնում է կամենալ, որ նոյնիսկ հայը, միապետական քաղաքականութեան այդ մեծագոյն զոհը, թողնի իր աւերւած տունը, ձգի հէնց ապերախտ ռուս կառավարութեան ձեռքով քանդւած իր բոյնը և գնայ դէպի Հեռաւոր Արևելք... գնայ ռուսական յաղթանակը պայմանաւորելու համար:*

*Ռուս կառավարութիւնը կամենում է, որ մենք արձագանք տանք կառավարական այդ կոչին, որ այդ մարդասպան, բռնակալ կառավարութեան տրամադրութեան տակ դնենք մեր լաւագոյն երիտասարդներին՝ ծաղիկը մեր ժողովրդի, ինչպէս այդ կատարեցին մեր հայրերը 19-րդ դարու ռուս-պարսկական և ռուս-տաճկական բոլոր պատերազմներում: Այս պատերազմը վարում է նոյն այն կառավարութիւնը, որ գլխաւոր պատասխանատուն է հարիւր հազարաւոր հայերի կոտորածներին Թիւրքիայում, որ ընդամէնը մի տարի առաջ կոտորում էր մեզ հայերիս և Կովկասի բոլոր ծայրերում. այն կառավարութիւնը որ ամբողջ մի դար խաբեց, շահագործեց մեր միամտութիւնը, մեր ուժերը ու մեր արիւնը իր աշխարհակալական նպատակների համար, ապա խլեց մեր դպրոցները, մեր ազգային եկեղեցական հարստութիւնը, կողոպտեց, հացազուրկ դարձրեց մեր գիւղացիներին՝ խլելով նրանց հողերը և տալով ռուս գաղթականներին: Մեր վէրքերը դեռ մխում են, Կովկասի բանտերը լի են հայի բռնաբարւած իրաւունքների համար մարտնչողներով. ռուսական հեռաւոր աքսորավայրերից դեռ լսւում են մեր հարիւրաւոր եղբայրակիցների անէծքն ու հեծեծանքները: Միթէ՞ հարկաւոր են նորանոր ապացոյցներ, որ ռուս կառավարութիւնը հայ տարրի ամենակատաղի թշնամին է:*

*Զարատանջ, հալածւած հա՛յ ժողովուրդ: Ահա այն կառավարութիւնը, որ այժմ իր նեղ ժամին երբ հոգևարքի մէջ՝ ընկած է հզօր թշնամու ոտքերի տակ իր գործած ոճիրների ծանրութիւնից, դիմում է քեզ, քո զաւակների արիւնն է ուզում իր փրկութեան համար:*

*Որպիսի՜ դառն հեգնանք, որպիսի՜ կատաղի ծաղր...*

*Հայոց աշխարհում պէտք է գտնւի՞ արդեօք մի հատիկ հայ մարդ, մի հատիկ հայ սիրտ, որ յանձն առնի մեր դարաւոր դահճի համար արիւն թափելու գերազանցապէս յիմար, անհունօրէն ապուշ պարտականութիւնը: Արիւնոտ ու սգաւոր վայրերում, ուր տակաւին չեն ցամաքել ռուսական գնդակների տակ նահատակւած անմեղների կարմիր արիւնը, այնտեղ, ուր մի ամբողջ ժողովուրդ է ողջակիզւում ցանուցիր մոխրակոյտների վրայ, պէտք է գտնւի՞ արդեօք խիզախ մէկը, որ կարողանայ ծառանալ հայութեան այնքան նւիրական զգացմունքների դէմ, յանդուգն մէկը, որ կարողանայ ըմբոստանալ այն հզօր ու խորունկ պարտականութեան հանդէպ, որ երկաթի պէս ծանրանում է ամէն մի հայ մարդու վրայ...*

*Հայե՛ր, խորհենք լրջօրէն... Պատերազմից վերադառնալու ո չ մ ի յ ո յ ս չ կ ա յ: Ռուսական խելացնոր աշխարհում չեն գնահատում զինւորի կեանքը. ոչինչ այնքան անարգւած չէ այնտեղ, որքան մարտնչող մարդու անհատականութիւնը: Քշում են, ուր ուզում են. խաղում են մարդկանց արեան հետ, ինչպէս կամենում են... Ապահով չէ մանաւանդ հայ զինւորը... Ռուս կառավարութեան տարածած սուտ լուրերին հաւատալու միամտութիւնը երբեք չունենանք... Դուք, պահեստի զինւորներդ, իբրև թարմ ուժեր պէտք է ուղարկւէք պատերազմի ամենավտանգաւոր վայրերը, ուր արիասիրտ Ճապոնի սուրը այնքան կտրական է, այնքան ճակատագրական է ձեր ամենքիդ համար: Անմտութիւն է ոչխարի պէս ընդառաջ գնալ դէպի մի անարգ և գարշելի մահ, անմտութիւն է եզան նման վիզը երկարացնել՝ ռուս կառավարութեան յաղթանակը պայմանաւորելու:*

*Համաշխարհային խաղաղութեան համար անհրաժեշտ է ռուսական բռնապետութեան պարտութիւնը. ազատ մտքի, գերագոյն արդարութեան ու մարդկային սրբազան իրաւունքների համար կարևոր է նրա անկումը: Իր երկաթէ ծանրութեամբ նա ճնշում է բովանդակ աշխարհի բոլոր ժողովրդական շարժումները: Պէտք է ազատել տառապող մարդկութիւնն ու քաղաքակրթութիւնը ռուսական վտանգից: Իր ճիւաղային թաթով նա խեղդում է թիւրքահայկական խնդիրը. Թող ռուսական բռնապետութիւնը պարտւի, որ այլևս անկարող լինի վճռական դեր խաղալ արիւնոտ հայաստանցու ճակատագրի վրայ...*

*Թող թուլանայ բռնապետութիւնը, թող ջարդւի պետական վայրենի ուժը, որպէս զի ռուսահպատակ ուրիշ*

ազգերի հետ միասին կովկասահայն էլ, համեմատաբար գոնէ, աւելի ազատ, աւելի ապահով ապրի… Յանուն գերագոյն արդարութեան, յանուն տառապող մարդկութեան, յանուն թիւրքահայ ողջակիզւող ժողովրդի, յանուն կովկասահայ հալածւող համայնքի ա ն հ ր ա ժ ե շ տ է ռուս կառավարութեան պարտութիւնը…

Հատուցման ժամն է հասել այս անարգ կառավարութեան առաջ։ Թող նա մենակ հաշիւ տայ իր գործած անթիւ չարիքների համար իր ժողովրդին, իր բոլոր զոհերին։

Այս օրերին, երբ վճռւում է ռուս բռնակալութեան տակ ճնշւած ժողովուրդների բախտը, երբ ամէն մի լեհացի, ամէն մի ֆինլանդացի, ամէն մի վրացի, ամէն մի հրէայ և իսկական ժողովրդի շահերը հասկացող ամէն մի խելացի ռուս սրտատրոփ սպասում է միապետութեան զօրքի նորանոր պարտութիւններին, ռուս խայտառակ բռնակալութեան անկման, ամէն մէկը պարտաւոր է հեռու փախչել այդ գայթակղութիւնից։ Եւ ժողովուրդը սրբազան պարտք պէտք է համարի այդպիսիներին պաշտպանելու, խրախուսելու, պատսպարելու…

Այս սև օրերին ո՛չ մ ի հ ա յ ի ր ա ւ ո ւ ն ք չ ո ւ ն ի ռուսական բռնապետութեան համար կռւելու։ Մենք ինքներս չ՚ուժեղացնենք այն թունոտ ձեռքը, որպէս զի յետոյ աւելի չտանջւենք, չ՚ամրացնենք այն բազուկը, որպէս զի յետոյ աւելի չկորանանք նրա բիրտ ծանրութեան տակ…

Դիմադրե՛նք, կռւե՛նք քանի կարող ենք, քանի ապրում ենք…

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

**ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ**

## „ԴՐՕՇԱԿ"Ի **ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

(ՀՐԱՏԱՐԱԿՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՒՄ)

—

ԹԻՖԼԻՍ, 7 Նոյեմբերի

Ռուս կառավարութիւնը մի նոր ոճիր ևս գործեց։ Նոր մինիստրի կարգադրութեամբ՝ 8–10,000 տաճկահայեր, որոնք 15 տարուց ի վեր հաստատւած են Սև ծովի ափերին, որպէս ծխախոտի մշակողներ, հրաման են ստացել մի շաբաթւայ մէջ թողնել երկիրը և վերադառնալ Թիւրքիա։ Հակառակ պարագայում՝ նրանք պիտի դիտւին իբրև Ռուսաստանի հպատակներ և պիտի փոխադրւին Արխանգելսկի ու Վօլօգդայի նահանգները։ Դա կատարեալ աւերումն է այդ աշխատաւոր ազգաբնակութեան համար, որը իր յամառ ջանքերով մշակել էր այդ վայրենի երկիրը, որ կառավարութիւնը կ՚ուզէ այժմ ռուս գաղթականներով բնակեցնել։ Ռուս գործարանատէրերը դիմում են արել մինիստրին, խնդրելով յետաձգել այդ հրամանի գործադրութիւնը, որ նրանց ահագին կորուստներ է պատճառում։ Անհնարին է նկարագրել այդ դժբախտների յուսահատութիւնը. Նրանք ոչ կարող են ապրել հիւսիսային ցուրտ կլիմայի մէջ և ոչ էլ վերադառնալ Թիւրքիա, ուր նրանց մուտքը արգելւած է։

ՄՈՒՇ, 4 Նոյեմբերի
(Թաւրիզի գծով)

Զօրանոցները արդէն շինւած են Սասունի բարձրութիւնների վրայ՝ Տալւորիկ, Սեմալ, Տափիկ, Կէլիէկուզան, Իշխընձոր։ Բիթլիսի վալի Ֆէրիտ բէյը սուլթանի հրամանով բարձրացաւ Սասուն՝ հանդիսաւոր կերպով բաց անելու զօրանոցները։ Թշւառութիւնը և յուսահատութիւնը աննկարագրելի են Սասունի մնացորդ ազգաբնակութեան մէջ, որը ձմրան խիստ շրջանում՝ զրկւած է բնակարաններից, զգեստից ու ապրուստի միջոցներից։ Կառավարութիւնը այժմ մերժում է իր խոստացած օգնութիւնը։ Զինւորները շարունակում են իրենց վայրագութիւնները։ Հաղորդակցութիւնը կտրւած է Սասունի և դաշտի միջև։ Հայերի զէնքերը խլւում են չարչարանքներով։ Այս բոլոր խստութիւնները նպատակ ունեն իսպառ յուսահատեցնելու սասունցիներին և ստիպելու նրանց գաղթելու։ Եւրոպական հսկողութեան բացակայութիւնը ծայրայեղ լքումն է պատճառում ժողովրդին։

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ

(ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՒԱԾ)

—

Մուշ-Սասուն, 25 յուլիս 1904

Սասունի և Տալւորիկի արկածեալ ժողովուրդը թէ ինչ դառն անցքեր անցուց և կ՚անցունէ արդէն յայտնի են ձեզ. կացութիւնը փոքր ի շատէ պարզւած են մեր մատուցած սրտաճմլիկ և աղէտալի վիճակացոյցերով։ Մենք ահունելի տանջանքներու մէջ փրկութեան ելք մը գտնելու համար՝ մեր յոյսը բնականաբար կեդրոնացուցինք ազգային պատրիարքարանի և ուրիշ մարդասիրական ձեռնարկութեանց վրայ. եթէ արդարասիրութիւնը ձեռք չկառկառէ մեզի, գիտենք որ մեզի փրկութիւն չիկայ այլևս։ Անհուն զոհեր տւինք կեանքի և ստացւածքի, սակայն դժբախտ ենք ասելու որ մեր սոսկալի դրութիւն ամենևին բարեփոխութիւն մը չի կրեց. դեռ երկար պիտի հոսէ մեր արիւնը և դեռ պիտի բազմապատկւին մեր վիշտերը։

Վերջին սոսկալի կոտորածէն յետոյ, դեռ բախտ չունեցանք նոյնիսկ շունչ մը առնելու. Սասուն և Տալւորիկ հիմա կը գտնուին հետևեալ տխուր վիճակի մէջ։

1) Մեր աւերակ տուներ տակաւին չնորոգւեցան, բոլորս ալ անպատսպար ենք, ցորեկ արևակէզ, գիշերներ առանց ծածկոյթի, ցրտահար։

2) Սնունդ գրեթէ չիկայ, մանաւանդ Տալւորիկի մէջ գրեթէ ոչ եպահիկ չի գտնւիր։

3) Մեր վնասներուն երբէք հատուցում չեղաւ։

4) Ամէնքս մերկ ու բոպիկ ենք։

5) Ամենևին չունինք անկողին, խշտի և այլն։

6) Ձմեռը կը մօտիկնայ, ձմեռնային ոչ մի պատրաստութիւն կայ։

7) Ահա զօրանոցներու շինութեամբ մեր վրայ պիտի ծանրանայ թիւրք զօրքերու ահաւոր ներկայութիւնը, մեր կիները, աղջիկներն ու տղաքը անոնց ձեռքը պիտի մնան և կառավարութիւնը միմիայն զօրանոցներու շինութեամբ է որ կըզբաղի, կարծես ամբողջ Սասունը զօրանոցի պիտի վերածէ։

8) Մեր եկեղեցիներն խոպան մնացին, որովհետև զօրքերու բազմութեան մէջ ինչպէս պիտի պաշտենք մեր կրօնը, որ այսքան հալածւած է իսլամական խժդժու-

թեամբ։ Անցեալները թիւրք զօրքերը հետեւեալ նախատինքը ստեղծեր են սուրբ խաչին դէմ, բան մը, որ իսլամական մոլեռանդութեան կրնայ արատ ալ բերել. ընկուզենի մեծ ծառի մը կեղեւը առնելով խաչ մը կը բերեն և զայն աղբով կը լեցնեն և վերեւը կը գրեն. „խրիսթիանլարըն խաչի"։

9) Մեր փայտերն ու ծառերը (մանաւանդ ի Տալւորիկ) բռնի կտրելով կառավարութիւնը զօրանոցներու յատկացուցած է առանց փոխարինութեան, որպէս զի չյաջողինք մեր տուներն ալ շինել։

10) Որ տեղեր որ զօրքեր գտնուին, մեր կիներն ու աղջիկները չեն համարձակիր ապրուստի համար աստին անդին երթալ։

11) Բադրանցի և այլ քիւրդ աշիրէթներով Մշոյ լեռը լեցուցեր է, որոնք չեն թողուր որ սասունցի հայերս մեր ապրուստը ճարելու համար Մուշ դանք. անցեալ օր կէլիէկուզանցիներն ծեծելով ետ դարձուցին։

12) Խումբ մը տալւորիկցիներ տակաւին լեռները թափառական կը մնան, չեն համարձակիր վար իջնել, որովհետեւ սպառնացած են սպաննել։

13) Կարգ մը անմեղ անձինք մեզմէն բանտարկելութեան դատապարտուած են։

14) Տիրող թշուառութենէն ամէն օր մեռնողներ կան։ Եթէ այսպէս թւենք դեռ շատ ցաւեր ունինք և հետզհետէ պիտի աւելնան. կը խնդրենք արգահատէք մեր սոսկալի թշուառութեան վրայ. կարգադրութիւն մը հաճիք փութացնել. իսկ եթէ այս դառնութիւնը շարունակուի, կը խնդրենք որ մեզի ըսէք ճար մը ընենք մեր գլխուն, որովհետեւ մեր յոյսը միմիայն ձեր գթութեան և ազգախնամութեան վրայ մնացած է։ Ի սէր Աստուծոյ, ի սէր քրիստոնէութեան, կամ մեզի ճար մը ընէք և՛ կամ զմեզ սուրէ անցունել տւէք՝ որ ազատինք։

*Ի դիմաց Սասնոյ և Տալւորիկի հայ ժողովրդեան*

*(22 Ստորագրութիւն)*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

## ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՍԱՍՈՒՆՈՒՄ

—

Մուշ, 26 Հոկտեմբեր

Կարօտեալներու ընդհանուր կացութիւնը շատ աղեխարշ է, մանաւանդ սասունցիներու վիճակը աննկարագրելի է. 1) Անոնք չունին շնորհքով պատսպարաններ. 2) Բոլորն ալ (ամենուն թիւը մօտ 8,000 է) մերկ են—ոչ տրեխ, ոչ զգեստ, ոչ անկողին և ոչ իսկ փսիաթ ունին. 3) Ոգեպահիկ ամենևին չկայ։ Կառավարութիւնը ամառուընէ նպաստ տալը դադրեցուցեր է։ Շատ գիւղերու տներու շինութեան դրամն ալ չտրուեցաւ ամբողջապէս. ահաւելի է անոնց վիճակը։ Թշուառութենէ ամէն օր մեռնողներ կան։ Զինուորներու հսկողութեան ու պաշարման տակն են։ Արգիլած են որ սասունցիները քաղաք կամ դաշտ իջնեն։ Նոյնիսկ գիւղէ գիւղ չեն կրնար երթալ։ Եթէ սաստիկ ստիպուին, պէտք է թէզքէրէ ստանան տեղւոյն զինուորական հրամանատարէն, այն ալ ամէն անգամ հազիւ 3-4-ի կը տրուի։

Քաղաքին մէջ մուտքը արգիլուած է։ Որ պահականոցին որ կը հանդիպին՝ կամ կը բռնուին կամ ետ կը ղրկուին։ Անօթութենէ վար կ'իջնեն և սակայն թոյլ չտրուիր։

Այս խստութիւններու նպատակն է՝ յուսահատեցնել ժողովուրդը, որպէս զի ցրուին։ Արդէն սարերը ձիւնել է։ Ձմրան մէջ ամէնքն ալ օրապահիկէ և զգեստէ զուրկ ի՞նչ պիտի ըլլայ լեռնցիներու վիճակ...

Այնտեղ ալ, ինչպէս Մշոյ դաշտին մէջ, չարաչար տանջանքներով հաւաքեցին ժողովրդի զէնքերը։ Անոնք որ զէնք չեն ունենար, դրամական տուգանքի կ'ենթարկուին։

Ամսոյս 17-ին մի երեսնապետ թիւրք զինուոր սպանուեցաւ յանկարծ Սասունում։ Կառավարութիւնը այդ ալ ֆէդայիներուն վերագրեց, մինչդեռ ֆէդայի չկար այն կողմ. երեւի զինուոր զինուորին է զարնել։

Դա պատճառ եղաւ, որ չորս սասունցի երեւելիներ մերուեցան և բանտ դրուեցան։ Բանտ ըսելով պէտք է հասկանանք մի կատարեալ դժոխք, ուր արագաբար կը փճանան հարիւրաւոր հայ անմեղ երիտասարդներ։ Տիֆի սաստիկ հիւանդութիւն է տարածուեր բանտերուն մէջ։ Վերջին տասը օրերուն մէջ 22 հայեր մեռան, որոնց մէջ էր մեր յիշատակելի գործիչներէն մէկը՝ դերքէվանքցի Վարդանը, որ ձերբակալուելէն 15-20 օրէ վերջ մեռաւ։ 60-է աւելի հիւանդներ կան հայերէն և ամէն օր կը մեռնին, որովհետեւ անկարելի է այն մթնոլորտին մէջ շնչել, ապրել...

Երեւակայեցէք մի աղտոտ, խոնաւ, դժոխային բնակարան, ուր բացի 60-70 իսլամներէ՝ որոնք գրաւեր են 9 սենեակներէն 6-ը, 100 հայերուն մնացեր են ընդամէնը երեք նեխուած սենեակներ. մարմին մարմնի վրայ... Եւ շատերը խոնաւ ու բաց սրահին մէջ, ցրտին ու գարշահոտութեան ենթակայ։ Մեղեններէն ոչ մէկը կրնայ պահպանել իր առողջութիւնը... Սասունէն իջնող թիւրք զօրքերը տիֆով վարակուեր են. բազմաթիւ զինուորներ մեռան ու կը մեռնին։ Բանտի սոսկումը սրածութենէ աւելի զարհուրելի է։ Բազմաթիւ ձերբակալումներու ձեռք զարկած է կառավարութիւնը, այս անգամ պատրուակելով, թէ 15 հոգինոց ֆէդայիներու մի խումբ է գտնուած Մշոյ դաշտի հայ գիւղերու մէջ. հրամայուած է ձերբակալել այն ամէն հայերը, որոնք հիւրընկալեր են անոնց։

Այս կողմերու հայ գործող երիտասարդ ուժերը փճացնելու համար՝ կառավարութիւնը ձեռնարկեր է մի սոսկալի գործի. տանջանքով առնուած զէնքերու տէրերը դատաստանի կ'ենթարկուին։ Ինչպէս կը հաւաստեն, 1200-1400 հայերու կոչնագրեր ղրկուած են՝ իբր յանցաւորներ, իբր ապստամբներ դատի կոչուելու։ Ի՞նչ պատիժ պիտի տրուի այս բազմութեանը... Ո՞ւր պիտի քշեն...

Կացութիւնը դառնացնող բաներէն մէկն ալ այս է, որ կառավարութիւնը, կ'ըսեն, մտադիր է Մշոյ դաշտին մէջ ևս զօրանոցներ կառուցանել...

Զարիքները անհաշիւ են. ո՞ր մէկին տոկալ. և արդեօք այսպէս իզուր կորչելո՞ւ են այսքան արիւն ու տառապանք...

—

Մեր թղթակցութեան մէջ մերկացրուած այդ սրտաճմլիկ փաստերը Կ. Պոլսի լրագրի մէջ հաղորդուած են ահա թէ ինչ ցինիկ ձևով.

„Կայսերական իրատէի մը համաձայն, Սասունի գաւառին մէջ, Կէլիէկուզանի, Սէմալի և Ջապրքի ամուր դիրքերուն վրայ և Բիթլիսի կուսակալութեան ջանքով շինուած զօրանոցներուն և աշտարակներուն բացման հանդէսները կատարուած էին, և այս առթիւ ոչխարներ մորթուելով, բարեմաղթութիւններ եղած էին կայսերական արեւշատութեան համար։ Մուշի պաշտօնաթերթը կը ծանուցանէ թէ

կայսերական պալատան Բ. քարտուղար և սենեկապետ բարձր. Իզզէդ փաշա սեպտ. 26 Թուակիր հեռագրով մը կայսերական բարձր գոհունակութիւնն ու բարևներն հաղորդած է Պիթլիսի կուսակալութեան։ Վսեմ. կուսակալն և նահանգին բոլոր պաշտօնատարներն ու երևելիներն հեռագրով երախտագիտական ուղերձ մը մատուցած են կայսերական պալատ"։

## ԱՆՑՔԵՐԸ ՏԱՐՕՆԻ ՄԷՋ

(ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻՆ)

25 յուլիս, 1904

Նախորդ շաբթուայ նամակներով փութացեր էի յայտնել Մշոյ դաշտին մէջ նորոգուած սրտաճմլիկ աղէտը, որուն զարհուրելի հետևանքը հետզհետէ իր դառն ազդեցութիւնը կ'ընէ դաշտեցի հայոց ճակատագրին վրայ։ Արկածաւոր գիւղերու ժողովուրդը տակաւին չհամարձակիր երթալ իր գլխակեր և արիւացաւեր բնակարանները։ Սոսկումէն զատ, շարունակական սպառնալիքները և ամէն օր ժողովրդի կրած տուայտանքը զօրքերէ, քիւրդերէ, ոստիկաններէ ևն, յուսաբեկ ըրած են ժողովուրդը. հունձքին առեն այս տագնապը տնտեսապէս աւելի քայքայիչ է։ Հայ մշակը չհամարձակիր ելլել իր արօրն ու ափը։

Ծանօթ հայահալած ոստիկանապետ Իզզէթ պէյ նորէն ոտքի վրայ է. 100-էն 150 ոստիկան զինուորներ գլխուն ժողոված անդադար գիւղերու վրայ կը յարձակի, սոսկալի տանջանաց կ'ենթարկէ հայ գիւղացին և անոնց զէնքերը կը հաւաքէ։ Այս տեսակ հաւաքումներ ըրած է չորս հինգ օր ի Վարդենիս, Արտօնք, Շարզ, Առնիստ, Մկրագոմ ևն գիւղերէ. և շարունակ լաց, կոծ ու աղաղակ կը հասնին մեզ ամէն կողմէ. դաշտին մէջ տեղ տեղ քիւրդերու զինեալ խումբեր կը շրջին, կը կողոպտեն. գիւղէ գիւղ չ'երթցուիր։ Հայերը իրենց տուներուն մէջ պաշարուած են, քաղաքին մէջ ալ խանութները փակ են դեռ։ Սուրբ Կարապետի վանքին շուրջն ալ վտանգաւոր խլրտումներ կ'ըլլան Ճպրանցի ցեղապետ Իպրահիմ պէյի և ուրիշ քիւրդերու կողմէ։ Յեղափոխականներն ալ գործի վրայ են դարձեալ դաշտին մէջ և քանի մը խումբերու բաժնուած՝ կը շրջին։ Թէպէտ իրենք երբէք նախայարձակ չեն եղած, բայց կառավարութիւնը միշտ պատրուակ մը կը նկատէ ջարդերը շարունակելու աւելի խժդժաբար։ Անուղղակի միջոցներով աղաչած, թախանձած ու պաղատած ենք որ չերևին դաշտին մէջ, չտան պատճառ թշուառ ժողովուրդի նորանոր աղէտներուն, բայց ինչ օգուտ. ասոնք կ'ըսեն թէ քանի որ չէ ապահովուած և չէ երաշխաւորած ժողովուրդի խաղաղութիւնը պահանջուած բարենորոգումներով, իրենք մազի չափ չեն շեղեր իրենց սկզբունքէն։ Մահ կամ բարենորոգում. ու յեղափոխականը չէ միայն որ զայն կը պահանջէ, այլ ամբողջ ժողովուրդը, որ այնքան յուսահատած է իր վիճակէն, կ'ուզէ քաւութեան նոխազի պէս անտրտունջ ընդունել ջարդերը, տոկալ նահատակութեան հոգեսպառ փորձութեան, մինչև որ ճար մը, դարման մը ձեռք բերուի։ Այսպէս կ'աղաղակէ տարօնցին ու սասունցին և միանգամայն մահ կամ դարման մը. բնաւ ազդեցութիւն չեն ըներ յորդոր և յուսատուութիւններ։ Այս է միակ միջոցն կ'ըսեն. կամ թող բոլորովին սրէ անցունեն մեզ կամ թէ ազատեն. իրաց այս կացութեան մէջ կուսակալ պէյ օձիքէս բռնած բնաւ վազ չիգար, բացարձակապէս կը պահանջէ, որ համաձայնիմ իր գաղափարին՝ ուղղակի լրտեսութիւն ընելու ի՜ վնաս ազգին, բան մը զոր բացէ ի բաց մերժեցի և պիտի մերժեմ, չնայելով որ տեսակ տեսակ սպառնալիքներ կ'ըլլան մեր դէմ։

Արդէն առաջին առթիւ երբ ձեր հեռագրական հրամանին վրայ ստանձնեցի այս պաշտօնը և իրենց ներկայացայ, „Պուրանըն բաթրիքի Արթին բաբազ տըր, պէն սէնի գապուլ իթմէմ", ըսաւ. պատասխանեցի թէ „Մենք հոգևորականներս ալ տեսակ մը բարոյական զինուորներ ենք սրբազան պատրիարքին իշխանութեան ներքև, հրամայած է և պարտաւոր եմ համակերպիլ". ալ ինքը լուռ կեցաւ, չմոռանալով սակայն պաղ ու բարկացոտ վերաբերում մ'ունենալ դէպի յիս և ներկայացուցած խնդիրներուս։ Այս մասին առանձին գրած եմ։

Կարօտելոց թիւը շատցաւ և 18,000-ի հասաւ. կացութեան երեսէն թշուառները կը շատնան միշտ ու մեր մտահոգութիւնները կը բազմապատկուին։ Հայոց հունձքերը չարաչար վնասուած են արդէն, նոյնիսկ մնացածներն ալ արտերէն չին կրնար հաւաքել. աղքատութիւնը անսահման է հոս և ես կը սոսկամ մտիկցող ձմեռէն. ի՞նչ պիտի ըլլայ մեր ժողովրդին հալը։ Ձմեռուան մէջ 3,000-ի չափ թշուառներ պիտի ունենանք. երբէք նպաստ և օգնութիւն չհասաւ, մեր ժողովուրդը եթէ ազատ մնայ իսկ մինչև աշուն, արդէն ձմրան մէջ սովէն պիտի ջարդուի ու ջնջուի։ Ճար ու ճամբայ մտածեցէք։

Ուրիշ տարիներու պէս ամենևին դիւրութիւն չկայ Տիարպէքիր կամ Եդեսիա գաղթելու, ոչ ոք կրնայ տեղէն շարժիլ. ես ի՛նչ ընեմ. ի՞նչպէս դիմանանք այս լափող աղէտներուն։ Ձեր պաշտպանութիւնը, գթութիւնը, հովանաւորութիւնը կը հայցեմք. կամ օգնութիւններ հասուցէք կամ վերջնական պատասխան մը որ հաղորդեմ անոնց, ես ալ չմնամ պատասխանատու անոնց արեան և ջնջելուն։

Լսեցիք.թէ Բաղէշի անգլիական և Վանի ֆրանսական հիւպատոսները ամսոյս սկիզբները մեկնեցան աստի, մնացին առժամանակեայ կերպով Վանի անգլիական և Բիթլիզի ռուսական հիւպատոսները։ Առաջինն ալ, որ երրորդ անգամ Սասուն պիտի երթայ, վերադարձէն ետք պիտի մեկնի. ունէ՞ նպաստ անոր միջոցաւ կամ ուրիշի չէ տրուած սասունցիներուն, որոնք չարաչար թշուառութեան մէջ են. կըստանաք պատճէնը անոնց մէկ աղերսագրին, որ իրենց կացութիւնը կը բացատրէ։

Խարբերդի ամերիկեան հիւպատոսը մէկ երկու շաբաթէ իվեր հոս է, քանիցս այցելեց մեզ, վաղը կը մեկնի Բաղէշ, յանուն կարօտելոց դիմումներ եղան, դեռ բան մը չէ ըրած, բայց խոստացած է գրել։ Յանուն բոլոր ժողովրդեան կը խնդրեմ ու կ'աղաչեմ որ բարեհաճիք ձեր միջնորդութիւնն ի գործ դնել Կ. Պօլսոյ ռուսական դեսպանին մօտ, որպէս զի անյապաղ հեռագրաւ հրաման հասցնէ տեղւոյս ռուսական հիւպատոս Շէրքովի՝ չմեկնել այս տեղէն, գէթ մինչև յառաջիկայ գարուն, անոր ներկայութիւնն խիստ կարևոր է։

Թշուառ ծխացիներէն ոչ ոք կրցաւ քաղաքս հասնել մեզ հաղորդելու համար իրենց գեղի քստմնելի կոտորածին մանրամասնութիւնը։ Հիւպատոսներ հաւաստեցին թէ, խստիւ բողոքած են նոր կոտորածներու մասին, թերևս ձեզ մանրամասն տեղեկութիւններ հասած են Սղերդէն, Տիգրանակերտի առաջնորդէն՝ Պշերիկ գաւառին և Տիարպէքիրի մաս մը գիւղերու մէջ պատահած սպա-

նութիւններու և աւարառութիւններու մասին: Պատահական այցելու մը պատմեց մեզ, թէ ամսոյս սկիզբները Պշիրիկի ութ հայ գիւղեր աւերուած, թալնուած, բնակիչներ ցրուած և թէ այն կողմերու բազմաթիւ հայ գիւղեր աւարառութեան ենթարկուած են:

(Ստորագրութիւն)

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ
## ԽԱՐԲԵՐԴԻ ՇՐՋԱՆԻ

(Շարունակ. № 9-ի)

Խարբերդ, 8/21 մայիս

Կ'ըսէինք թէ մայիսի մէջ սկսան խուզարկութիւնները. այո, և շարունակուեցան մինչև յուլիսի 7, երբ այս վերջին ամսուն 20-ին կ'աւարտէր „նախնական քննութիւն" ըսուածը: Ձերբակալութիւններու համագումար թիւն էր 35, որոնցմէ մեծագոյն մասը մինչև մէկ ամիս ամէն յարաբերութենէ զրկուած մնաց (իխթելաթտէն մէն): Ընենք հիմա տանջանքներու թւումն մասանց:

**Յարութիւն Սէմէրճեան.**—Համետագործ, մէկ զաւկի հայր, 32 տարեկան. երեք օր գիշեր ցորեկ անխնայ ծեծի ենթարկուեցաւ, երբ իր հանգըստի ժամերուն կինը կ'ենթարկուէր նոյն պատիժներուն ու ծեծին, որուն օգնութեան աղաղակներն ու վայնասունը աւելի վայրագ պատիժմըն էին իրեն: Ամենէն ետքը իր կինը իր իսկ աչքերուն առջև պղծեց գօմիսէր Համտին: Երեք օր ետքը ծեծի տակ երբ նուաղած էր, մեռած կարծուելով և պատասխանատուութենէ մը ազատ գտնելու համար՝ պատուհանէն վար նետուեցաւ փօլիս Գատրիին ու Աճմէտին կողմէն և կինն ալ վիրաւոր ու անպատուած տուն վերադարձաւ:

**Սեաղցի Սերոբ.**—38 տարեկան, բազմանդամ ընտանիքի հայր, Սէմէրճեան Յարութիւնի ջորեպան ընկերը.—ութ օր անընդհատ ամենասաստիկ ծեծի ենթարկուած, մէկ գիշերը 200 հարուած համրուած է, և ամսի մը չափ ամէն յարաբերութենէ զրկուած: Տանջանքն այն աստիճանի հասած, որ այլևս ոտքի վրայ կենալու անկարող եղած է և զինքը ճէմիշ տանել բերելու համար՝ ոտքէն չուան ձգած և ութ օր այսպէս դիակի նման քաշած տարած են:

**Գարահիսարցի Յաբէթ.** — 26 տարեկան, ամուրի, բայց որբ եղբայրներու ու քոյրերու և այրի մօր մը հոգովը ծանրաբեռնուած, Սէմէրճեանի ջորեպան միւս ընկերը, Յակոբի հաւասար խոշտանգում կրած:

**Կարապետ Թաշճեան.**—Հիւսէյնիկ աւանէն, վաճառական, ընտանիքի հայր, 35 տարեկան. վեց օր քնատ մնացած և չարաչար ծեծ կերած: Ամիսի մը չափ ամէն յարաբերութիւններէ զրկուած:

**Աւետիս Թաշճեան.** — Կարապետի եղբայրը, 27 տարեկան, ամուրի և իր եղբօր տանջանքը բաժնած:

**Յարութիւն Թաշեան.** — Վերի երկուքին միւս եղբայրը, 30 տարեկան, ամուսնացած. հինգ օր քնատ մնացած և ամիս մը ամէն յարաբերութիւններէ զրկուած:

**Խաչատուր Զուլճեան.** — Խարբերդէն, 20 տարեկան պատանի մը. վեց օր ամենասաստիկ տանջանքի ենթարկուած և ամիս մը ամէն յարաբերութենէ զրկուած:

**Հաճի Սեդրակ Սէմէրճեան.** — Յարութիւնի խանութի ընկերը, 30 տարեկան, ամուրի, բայց որբ քոյրերու և այրի մօր մը հոգովը ծանրաբեռնուած. ութ օր խոշտանգուած, քնատ մնացած և քսան օրէն աւելի ամէն յարաբերութենէ զրկուած:

**Աճամեդեան Տիգրան.** — Արապկերցի, 18 տարեկան, ամուրի. վեց օր ծեծի ենթարկուած, անօթի ու ծարաւ մնացած, շաբաթներով ամէն յարաբերութենէ զրկուած:

**Արապկերցի Սիսակ.**—Ամուրի, 27 տարեկան, 7 օր ածխանոցը մնացած, անօթի ծարաւ և տանջանքի ենթարկուած:

**Առաքել Գազանճեան.** — Խարբերդէն, 17 տարեկան պատանի մը. չորս օր ծեծի ենթարկուած ու ամիս մը ամէն յարաբերութենէ զրկուած:

**Տիգրանակերտցի Գէւորգ.**—Խարբերդէն, հիւսն, ամուսնացած, 30 տարեկան, ծեր հօր մը և մօր մը խնամածուն. վեց օր փայտատան մէջ անօթի ծարաւ ու քնատ մնացած, ենթարկուելով շատ գիշերներ ծեծի, շաբաթներով ամէն յարաբերութենէ արգելուած:

**Խուրի Խաչօ.**—Խարբերդէն, 65 տարեկան սպիտակ մազերով ծերունի մը ու կորաքամակ. շաբաթ մը անօթի ու քնատ մնացած, ամէն յարաբերութենէ արգելուած:

**Փիթէ Գէւորգ.**—Աղվան գիւղէն, 55 տարեկան, երկրագործ, միևնոյն տանջանքներուն ենթարկուած:

**Փիթէ Սարգիս.**—Գէորգին տղան, 28 տարեկան, ամուսնացած, հօրը տանջանքներուն բաժնեկից:

**Փիթէ Վարդան.**—Գէւորգին տղան, 24 տարեկան, հօր և եղբօրը տանջանքներուն ընկեր:

**Նիկողոս Թէնեքեճեան.**—Խարբերդէն, 38 տարեկան, բազմանդամ ընտանիքի հայր և Ամերիկեան գօլէճի ուսուցիչներէն, միևնոյն ատեն Խարբերդի բողոքական հասարակութեան ազգապետ. ամիսի մը մօտ յարաբերութենէ զրկուած և գիշերները քնատ թողուած ըլլալով՝ մտքին հաւասարակշռութիւնը կորսնցուց և ցնորական վիճակ մը առաւ:

**Առաքել Գալանճեան.** — Խարբերդէն, 17 տարեկան պատանի մը. չորս օր ծեծի ենթարկուած, անօթի ու ծարաւ: Շաբաթներով ամէն յարաբերութենէ զրկուած:

**Խուրի Յովհաննէս.** — Խաչօյին տղան, 18 տարեկան. հօրը տանջանքներուն բաժնեկից և ընկերը:

**Յովհաննէս Վագասեան.**—Մեզրէէն, 18 տարեկան, ուսուցիչ. երկար օրեր քնատ մնացած ու տանջանքներու ենթարկուած, շաբաթներով ամէն յարաբերութենէ զրկուած:

**Լևոն Միսաքեան.**—Մեզրեցի, 40 տարեկան, բազմանդամ ընտանիքի հայր, հին ազնուական տան մը զաւակ. ութ օր անխնայ ծեծ կերած,

անօթի ու ծարաւ, ամիս մը ամէն յարաբերութենէ արգելած։

Տէմիրճի Աբրահամ.—Մէզէրէէն, 48 տարեկան, բազմանդամ ընտանիքի հայր, ութ օր ծեծուած, ամիս մը քնատ և ամէն յարաբերութենէ զուրկ մնացած։

Ասոնք միայն այն բանտարկեալներն էին, որոնք խստագոյն տանջանքներու և պատիժի ենթարկուեցան, որոնցմէ զատ հետևեալներն ալ առաւել կամ նուազ նեղութեան օրեր ունեցան, շաբաթներով խիստ հսկողութեան ենթարկուած և գիշերներով քնատ թողուած ըլլալով։

Աստուր Ժամակոչեան.—Մեզերէէն, փաստաբան, գաւառական ժողովոյ բ. ատենապետ և անդամ քաղաք. ժողովոյ, բազմանդամ ընտանիքի հայր։

Յովհաննէս Յարութիւնեան.—Խարբերդէն, գրագէտ, ուսուցիչ, բազմանդամ ընտանիքի հայր և գաւառական ժողովոյ անդամ։

Մկրտիչ Տ. Ստեփանեան.—Մեզերէէն՝ դեղագործ, գաւառական ժողովոյ բ. ատենապետ և բազմանդամ ընտանիքի հայր։

Ռուբէն Զարդարեան.—Մեզերէէն, ուսուցիչ և գրագէտ, գաւառական ժողովոյ ա. ատենադպիր և բազմանդամ ընտանիքի հայր։

Գեղամ Մուշեղեան.—Խարբերդէն, ուսուցիչ քափուչին հայերու վարժարանին, ընտանիքի հայր։

Կարապետ Գալուստեան.—Խարբերդէն, վաճառական, ընտանիքի հայր։

Յարութիւն Զերագեան.—Արապկերցի վաճառական 22 տարեկան։

Սիւրսիւրցի Պօղոս.—Ամուրի մշակ։

Գառնիկ Տ. Բաղդասարեան.—Խարբերդէն, վաճառական, 20 տարեկան։

Պետրոս Սահակեան.—Իզմէ գեղէն, Ամերիկեան գոլէճէն շրջանաւարտ, 22 տարեկան։

Միսաք Ազատեան.—Արապկերցի, 22 տարեկան, կօշկագործ։

Փիրեցի Համբարձում.—Աղքատ գործաւոր մը, ընտանիքի հայր։

Յակոբ Քէրմանեան.—Խարբերդէն, վաճառական, ընտանիքի հայր։

Խարբերդի առևտրական շէնքը՝ ուր լեցուած մնացին ասոնք մէկ երկու ամիս, սպասելով նախնական քննութեանց աւարտման՝ դարձեր էր ժանտատեսիլ սպանդանոց մը, ուրկէ գիշերները տանջանքի ենթարկուած զոհերուն աղաղակները կը լսուէին՝ խառն հառաչներուն բիրտ ձայնին ու դահիճներու յիշոցին։ Կառավարութեան բոլոր պաշտօնական գործերը ընդհատուեցան ամիսներով. թիւրք խուժանին ամենէն վտանգաւորները միայն կայնել էին պահ պահ ցորեկները այս ու այն սենեակը, ստուգելու համար թէ նոր ձերբակալուածներ կայի՞ն թէ որո՞նք էին ատոնք, անոնց մէջ արդեօք գեղադէմ պատանիներ կը գտնուէին, որպէս զի գիշերային այցելութեանց համար իրենց կանխապատրաստութիւնն ունենան ու սօֆթաներ, պաշիպօզուք սրիկաներ դրսէն կը միջամտէին քննութեանց ու կը մասնակցէին տանջանքներու տնօրէնութեան, յոգնած փոլիսներու ձեռքէն իրենք առնելով փայտն ու շարունակելով հարուածները։ Ասոնց մէջ կ՚արժէ նշանակել հասաս պաշի Չիւքրին, որ նշանաւոր սրիկայ ու գող մըն է։

Անկարելի պիտի ըլլար մանրամասնութեամբ գրել հոս բոլոր այն չարչարանքները, որ կրեցին այդ անմեղ զոհերը, որոնցմէ մեծագոյն մասը դեռ մինչև դատարան չ՚ելած, չէր գիտեր թէ ի՞նչ յանցանքով ձերբակալուած է և ի՞նչ բանի համար։ Յուլիսի և օգոստոսի ամենասաստիկ տապին այդ 35 անձերը ամիսէն աւելի սպասեցին նաև Խարբերդի պզտիկ բանտին մէջ իրարու վրայ լեցուած, շունչ առնելու իսկ անկարող։ Այս բանտին մէջ ալ դեռ շարունակուեցաւ նոյն խստութիւնը, որպէս զի դրսէն ծնողքի կամ մօտաւոր ազգականի հետ խօսակցութիւն չ՚ըլլայ և. ասով կատարուած անգթութիւնները գաղտնի մնացած ըլլան և անոնց թողած սպիները անցնին։

Սակայն բանտարկեալները միջոց գտան և թէ գրաւոր կերպով թէ հեռագրով բողոքեցին դատական քննիչ Համիդ պէյին, կուսակալին և վերաքննիչ ատեանի նախագահին, պահանջելով որ բժշկական քննութեան մը ենթարկուին իրենք։ Դատական քննիչը երբեք իր օրերուն բժիշկ չղրկեց, այլ բանտարկեալներուն Մեզերէի կեդրոնական բանտը փոխադրելէն ետքը միայն հաճեցաւ բժիշկներ ղրկել, երբ բողոքուած թուականին 20-25 օր անցած էր արդէն, բայց և այնպէս շատ սպիներ դեռ թարմ էին և ծեծին հետքերը կը մնային։ Սակայն Համտի պէյ սպառնալիքի տակ՝ թող չտուաւ որ բժիշկները ճշմարտութիւնն ամբողջովին տեղեկագրեն, ինչ որ հաստատուեցաւ ետքէն, նոյնիսկ դատարանին առջև, երբ բժշկական քննիչ Մրթազա էֆէնտի վկայութեան կանչուեցաւ։ Աքանչելի նիստ մըն էր ատիկայ, ուր խառն բազմութեան մը առջև ու նոյն ինքն Համտի պէյի ներկայութեանը, Մրթազա չի կրցաւ վերջապէս ծածկել իրեն եղած սպառնալիքները։

Սոսկալի ու վայրագ ցոյց մըն էր, երբ Խարբերդի բանտէն ձերբակալուածները յուլիս 20-ին Մեզերէի բանտը փոխադրուեցան, ութը կամ տասնական հոգիով թև թևի կապուած ամէնքն ալ, շրջապատուած սուինաւոր հրացանակիր զինուորներէ, որոնց առջևէն կը քալէին պինպաշի Մուրատ պէյ և Ֆէթթահ էֆէնտի։ Ամբողջ Խարբերդի բնակչութիւնը՝ թիւրք թէ հայ, խռնուած էր շուկաները կամ ճամբաներուն վրայ և գոռ հ կուտար, թիւրքերը սպառնալից, մոլեգնած, կրճտելով իրենց ակռաները, հայերը՝ իրենց հոգիէն վիրաւոր, գլխահակ, սարսափահար ու արտասուալից, որովհետև կը տեսնէին իրենց քաղաքին ամենէն պատուաւոր ու անմեղ մարդիկը ողբալի ծանականքի մ՚ենթարկուած։

Դատավարութիւնը տևեց մօտաւորապէս վեց ամիս, որուն ընթացքի մէջ, չի մոռնանք ըսելու թէ, Գարահիսար քաղաքէն ալ եօթ և Աղճնէն ալ մէկ հոգի բերուեցան՝ աւելնալու համար այստեղի ձերբակալուածներուն վրայ, քանի որ երկու ջորեպանները Յակոբ և Յաբէթ Գարահիսարի կողմերէն էին և իրենց ճամբորդները այդ կողմերէն կը փախցնէին։

Երբեք դատավարութիւն մը այսքան խայտառակութեամբ երևան եկած չէ ուէ երկրի մը մէջ և այսքան բարձրաձայն աղաղակած չէ՛ զզուելի բռնակալութեան մը անգթութիւնները։

(Վերջը միւս անգամ)



# ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Ո՞վ կարող էր գուշակել, որ այդ համեստ, լուռ երիտասարդը իր հանդարտ, անյոյզ տեմպերամենտով կը նետւէր յանկարծ կեանքի ամենայորձանուտ հոսանքի մէջ, կը դառնար Սասունի դիւցազներգութեան ամենապատկառելի դէմքերից մինը:

Նա մի պարզ ուսուցիչ էր Բուլղարիայի հայ դպրոցներում՝ դեռ ընդամենը երեք տարի սրանից առաջ: Եռանդուն մասնակցութիւն ունենալով բոլոր գործերում՝ նա իրեն հեռու էր պահում տեղական կեանքի գձուձ արտայայտութիւններից, իր պարկեշտ բնաւորութեամբ վայելում էր ընկերների սէրն ու համակրանքը:

Նա շատ սիրուած էր տակաւին Կ. Պոլիս եղած ժամանակ, ուր սկսել էր իր յեղափոխական աշխատանքը, որպէս գործակից ընկեր անմոռանալի Բաբկէնի:

1901 թւի աշնան Վահանը երկիր անցաւ, աշխատակցեց մի առժամանակ Գ.-ին Վանում, ապա բարձրացաւ Սասուն, ուր գործերի վիճակը պահանջում էր նրա պէս լրջմիտ, խոհուն ու շրջահայեաց մէկի ներկայութիւնը: Ընտրուած Պատասխանատու մարմնի անդամ՝ Վահանը կարճ ժամանակամիջոցում մեծ գործ տեսաւ. իր հեղինակութեամբ լռեցրեց մանր անձնական կրքերը ֆէդայիների շարքերում, հաշտեցրեց գժտուածներին և, կարելի է ասել, ինքն իր ջանքերով կազմակերպեց յեղափոխականների մի ձոյլ բանակ: Խորհրդակցական ժողովներ կազմեց Սասունի ժողովրդի մէջ, ծրագիրներ մշակեց և առհասարակ մեծ զարկ տուեց ինքնապաշտպանութեան գործին:

Թղթակից „Դրօշակի“՝ նա տեղեկագրում էր առօրեայ հարստահարութիւնները, խօսում էր գալիք փոթորիկների մասին, կանչում էր դէպի երկիր՝ արտասահմանի հայ երիտասարդներին, ոգեւորում էր գործով և չափազանց երջանիկ էր զգում իրեն կռւի ու տառապանքի աշխարհում:

Եկան և փոթորկի օրերը: Վահանը իր ընկերների հետ առաջնորդում ու խրախուսում էր ժողովրդին: Կռիւը բորբոքուած՝ նա շարունակում էր թղթակցել „Դրօշակին“, տեղեկագրում էր ընդհարումների յուզիչ մանրամասները:

Ապրիլ 14-ի նամակով անհուն դառնութեամբ Վահանը գուժում էր Հրայրի մահը: „Իր կարմիր մահը կարմիր մելանով գրեցի“, — հաղորդում էր նա:

„Վաղը թերևս նոր կռիւ ունենանք: Եթէ յաղթւինք, և Սասունը ոչնչանայ, թող ուրիշներ լուծեն մեր վրէժը“, — այդպէս էր վերջացնում նա ապրիլի 14-ի իր նամակը:

Եւ դա Վահանի վերջին նամակը եղաւ... Ձայնը լռեց, բեղուն, արագասահ գրիչը կանգ առաւ:

Ամիսներ անցան—և Վահանի մասին ոչ մի ստոյգ տեղեկութիւն: Չարագուշակ լուրերը տեղում էին իրար ետևից, բայց երկար ժամանակ չէինք ուզում հաւատալ...

Ո՞ր ժայռի տակ, ո՞ր խոռոչի կամ ձորի մէջ է հանգստանում այժմ թանկագին ընկերոջ գնդակահար դիակը,—յայտնի չէ: Բայց լոկ հողեղէն գերեզմաններով չեն յաւերժանում գաղափարի առաջամարտիկները: Վահանի գերեզմանը Ս ա ս ո ւ ն ն է, մարտիրոսութեան և հերոսութեան վայրը, ուր ազատախոհ սերունդները միշտ նուիրական պաշտամունքի պէս կը պահեն, կը գուրգուրեն Վահանների անբիծ յիշատակը:

# ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍՏԵՐԴԱՄԻ ԿՕՆԳՐԷՍԸ

### III

Կարլ Կաուցկուն յանձնեց դժւարին պարտականութիւն—1900 թւի Պարիզի կօնգրէսին—խմբագրել մի այնպիսի որոշում, որը ընդմիշտ լուծէր „մինիստրական“ կնճռոտ խնդիրը և վախճան դնէր սօցիալիստական երկու թևերի — գէդիստների ու ժօռէսիստների — սպանիչ կռիւներին:

Մարքսիզմի հռչակաւոր թէօրիտիկոսը, որ սովորաբար մոլեռանդ պաշտպան է հանդիսանում վարդապետութեան սկզբունքների՝ անկարող եղաւ և չուզեց ներկայացնել մի բացարձակ ու յստակ որոշում: Նրա խմբագրած բանաձևը թէև մերժում էր „մինիստրականութիւնը“ և մշտական դաշնակցութիւնները տիրող կուսակցութիւնների հետ, բայց և յայտարարում էր, ի մեծ զարմանս գէդիստների և ուղղափառների, որ բացառիկ պարագաներում, ծանր վտանգների դէմ կռւելու համար՝ սօցիալիստը կարող է ժամանակաւորապէս ընդունել մինիստրական պաշտօն, համաձայնութեամբ իր կուսակցութեան մեծամասնութեան:

Դժւար էր ներկայացնել դրանից աւելի բաւարար որոշում: Ճիշդ է, նա երկսայրի էր ու առաձգական — քանի որ „բացառիկ պարագաների“ հասկացողութիւնը կարող է տարբեր լինել տարբեր անհատների ու կուսակցութիւնների մէջ — բայց այդ որոշումը համապատասխան էր իրականութեան պահանջներին:

Եւ Կաուցկու բանաձևը ընդունւեց ձայների ահագին մեծամասնութեամբ. դա գործնական կեանքի յաղթանակն էր՝ ծայրայեղ ու ամուլ վարդապետականութեան (դօքտրինեօրութեան) դէմ:

Ժիւլ Գէդ և իր ընկերները դժգոհ մնացին: „Սօցիալիստը երբէք, ոչ մի պարագայում չպէտք է մտնէ կառավարութեան մէջ“ — ասացին նրանք և այդ մտքով առաջարկեցին մի նոր բանաձև: Բայց դրա համար ձայն տւեց միայն չնչին փոքրամասնութիւն:

Կաուցկու ըստ երևոյթին հաշտարար բանաձևը չհասաւ իր նպատակին: Պարիզի կօնգրէսը չհաշտեցրեց երկու կռւող բանակները. ընդհակառակը, վիհը աւելի ևս խորացաւ երկուսի մէջ, չնայած Ժօռէսի անդուլ ջանքերին, որը շարունակ ուժերի միացման հրաւէր էր կարդում: Ժօռէս համակերպեց կօնգրէսի որոշման, Գէդը ըմբոստացաւ և շարունակեց իր արշաւանքը ժօռէսեանների դէմ: Նա քաջալերւեց, թև առաւ մանաւանդ անցեալ 1903 թւի Դրէզդէնի կօնգրէսից յետոյ, ուր գերմանական Սօցիալ-դէմօկրատիան Բէբէլի ճառերի ազդեցութեան տակ՝ ճնշող մեծամասնութեամբ ընդունեց մի որոշում, ուղղւած Բերնշտայնի և „րէվիզիօնիզմի“ դէմ:

Ժիւլ Գէդ միանգամայն նպատակայարմար գտաւ, որ այդ որոշումը ենթարկւէր Ամստերդամի միջազգային կօնգրէսի քննութեան, որ նա տարածւէր բոլոր երկրների վրայ, քանի որ նրանով դատապարտւում էր և իր հակառակորդ Ժօռէսի տաքտիկը:

Այդ վերջինին նա դնում էր միևնոյն տախտակի վրայ Բերնշտայնի հետ, թէև լաւ գիտէր, որ մեղանչում էր արդարութեան դէմ: Ժօռէս տարբեր է Բերնշտայնից՝ թէ իր աւելի արմատական հայեացքներով, թէ աւելի յեղափոխական տեմպերամենտով,—և հայեացքների այդ տարբերութիւնը նա քանիցս շեշտել է Ֆրանսիայի սօցիալիստների առջև, մամուլի ու հրապարակային ժողովների մէջ:

Եւ ահա Ամստերդամում նորից բորբոքւեց երկու ուղղութիւնների յաւիտենական վէճը. նորից փոխադարձ խարազանումներ՝ միջազգային սօցիալիստական ատեանի առջև: Մի ճշմարիտ մենամարտ, որի նմանը երբէք չէր տեսնւած սօցիալիզմի միջազգային կօնգրէսներում: փոխն ի փոխ բեմ էին նետւում երկու ամենափայլուն, աշխարհահռչակ հռետորները, միջազգային սօցիալիզմի երկու ամենաընտիր պարագլուխները, որոնցից իւրաքանչիւրը պաշտպանում էր իր ջոկ տաքտիկը և պերճախօսութեան ուժգին թափերով ձգտում էր տապալել հակառակորդին:

Երկու հռետորները—Բէբէլ և Ժօռէս—տարբեր էին իրենց խառնւածքով, մտաւոր ու հոգեկան կարողութիւններով: Բէբէլ հուժկու ագիտատոր է, քաջ բանակռւող, կուսակցութեան առաջնորդ (Parteileiter), բայց նա չունի Ժօռէսի գիտական պատրաստականութիւնը, նրա սեղմ, կարող տրամաբանութիւնը, նրա պատմական, փիլիսոփայական լայն ծանօթութիւնները: Նա գերմանական շկօլայի հռետոր է և չունի նաև Ժօռէսի ահարկու տեմպերամենտը, նրա խօսքի ուժը, նրա հսկայական թռիչքները:

Բէբէլ, որ պաշտպանում էր օրթօդօքս ուղղութիւնը՝ այսպէս անւանւած „մինիստրական սօցիալիզմի“ դէմ, յաճախ չարաչար վրիպումներ էր գործում և նսեմանում էր Ժօռէսի առաջ, նոյնիսկ օրթօդօքսներից շատերի աչքում: Այդպէս, օրինակ, քննադատելով Ժօռէսի աջակցութիւնը ֆրանսիական հանրապետական կառավարութիւններին՝ նա կրկնում էր, նոյնիսկ չափազանցնելով, Ժիւլ Գէդի մի անհեթեթ կարծիքը՝ թէ սահմանադրական միապետութիւնը — անգամ պրուսականը — շատ առաւելութիւններ ունի հանրապետութեան դիմաց...

Մի անմտած, անզգոյշ յայտարարութիւն՝ որ չէր կարող տպաւորութիւն անել լուրջ ունկնդիրների վրայ: Ժօռէս իրաւունք ունէր ասել, որ դա լուրջ պատճառաբանութիւն չէ, այլ պօլեմիկական մի խաղ. նա իրաւունք ունէր փաստաբանելու հանրապետութեան դատը և խարանելու պրուսական միապետութիւնը, ուր դեռ իշխում է բիսմարկեան ոգին, ուր Սօցիալ-դէմօկրատիան՝ չնայած իր անսովոր աճման ու յաղթական աղաղակներին՝ մինչև օրս չէ համարձակւում գումարել սօցիալիստական միջազգային կօնգրէս, երկիւղ կրելով, որ պրուսական բիրտ ոստիկանութիւնը ռուսաց ժանդարմների ձեռքը կը մատնէ ռուս, լեհ և ուրիշ սօցիալիստ պատւիրակներին:

Ժօռէսի ձայնը այդ կէտում ճնշող էր, ջախջախիչ հակառակորդների համար. նա աւելի ևս հեռու գնաց յարձակողականի մէջ և արտասանեց մի թունաւոր մեղադրական՝ Գերմանիայի Սօցիալ-դէմօկրատիայի դէմ: „Դուք չունիք — ասաց նա, դիմելով Բէբէլին և գերմանական օրթօդօքս պատգամաւորներին—դուք չունիք ոչ յեղափոխական աւանդութիւններ, ոչ էլ պարլամենտական ուժ“... Եւ այդ ոգով առաջ գնաց հռչակաւոր տրիբունը, որ անզուսպ կատաղութեամբ, բայց միշտ բարձր, արժանաւոր տօնով, առանց մանր կրքի ու կուսակցական բծախնդրութեան, հարւածեց ուղղափառ Սօցիալ-դէմօկրատիայի մեղկութիւնը, յեղափոխական կորովի

պակասութիւնը, բռնի ուժի առջև դիւրաւ համակերպելու տրամադրութիւնը։

Հարւածները շեշտակի էին. արդարև, զարմանալի է այն հակասութիւնը, որ նկատւում է գերմանական Սօցիալ-դէմօկրատիայի թւական ուժի և յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն հ մ ա յ ք ի միջև. զարմանալի է, որ Սօցիալ-դէմօկրատիան լինելով ամենահզօր կուսակցութիւնը կայսրութեան մէջ, ունենալով երեք միլիօնի չափ ընտրողներ և ութսունից աւելի պատգամաւորներ պարլամենտում, անկարող է հանդիսանում ա զ դ ո ւ կ ե ր պ ո վ դիմադրելու պրուսական ռէժիմի այլանդակութիւններին, խօսքի ու մամուլի ազատութեան դէմ հանած սահմանափակումներին, փոքր ազգերի դէմ կազմակերպած վայրենի հալածանքին ևն, ևն։

Չորս օրւայ տենդային բանակռւից յետոյ՝ մեծամասնութեամբ 25 ձայների ընդդէմ 17-ի—քւէարկութիւնը կատարւում էր ըստ ազգայնութեան—կօնգրէսը ընդունեց Դրէզդէնի որոշումը, որը մերժում է „րէվիզիօնիստական“ (վերաքննական) ձգտումները, մերժում է մանր ռէֆօրմների քաղաքականութիւնը, արգելում է սօցիալիստներին կազմել յարատև դաշնակցութիւններ բուրժուա-ռամկավար կուսակցութիւնների հետ, արգելում է նրանց „ձգտել մասնակցելու կառավարական իշխանութեան մէջ՝ բուրժուա հասարակութեան շրջանակներում“։

Այդպէս որոշւեց տաքտիկի հարցը Ամստերդամի համաժողովում։ Սակայն ո՞ւմ է նա պարտաւորեցնում... Կարելի է ասել՝ ոչ ոքի։ Իւրաքանչիւր երկրում սօցիալիստ կուսակցութիւնը կամ կուսակցութիւնները պիտի շարունակեն գործադրել այն տաքտիկը, որը նրանց թւում է աւելի համապատասխան իրենց կեանքի ուրոյն պայմաններին։ Միջազգային կօնգրէսների՝ տաքտիկի վերաբերեալ վճիռները մեծ մասամբ դատապարտւած են մնալու իբրև „սկզբունքի ծանուցումներ“, լոկ թէօրիական ազդարարութիւններ՝ առանց գործնական լուրջ նշանակութեան։ Ժօռէսի կուսակցութիւնը, ինչպէս և սօցիալիստական մարմինները Բելգիայում, Նորվէգիայում, Շվէյցարիայում և ուրիշ ռամկավար երկրներում, որոնք ձայն տւին Դրէզդէնի որոշման դէմ՝ չպիտի շեղւեն իրենց փորձած, օգտակար ճանաչած տաքտիկից. Նրանք պիտի շարունակեն մշտապէս աջակցել ռամկավարական — թէկուզ „բուրժուա“ — կուսակցութիւններին ու կառավարութիւններին, քանի որ տեսնում են, որ այդ աջակցութեամբ չէզոքացնում են ռէակցիայի ուժը, յաղթահարում, յետ են մղում միլիտարիզմի, կղերականութեան չարիքները, զարկ են տալիս ազատութեան ռէժիմին բոլոր ասպարէզներում և նւաճում են աւելի և աւելի խոշոր ռէֆօրմներ ի նպաստ աշխատաւոր ընդհանրութեան։

Կեանքը „թէօրիաներից“ աւելի ուժեղ է և կեանքի հրամայական պահանջն է, որ ծնունդ է տալիս Ժօռէսներին։ Պրօլետարիատը, խեղճ, հալածւած ընդհանրութիւնը չէ գոհանում ֆ օ ր մ ո ւ լ ն ե ր ո վ, հեռաւոր ապագայի հրապոյրներով, — նա պահանջում է իրական փաստեր, նա ուզում է վայելել սօցիալիստական շարժման բարիքները հ ե ն ց ն ե ր կ ա յ ո ւ մ։

Ամէն մի կռւող կուսակցութիւն պիտի ունենայ, անշուշտ, իր ղեկավարող սկզբունքները, իր սօցիալական-քաղաքական դաւանանքը, — իր թէօրիաները։ Բայց „դօքտրինեօրութիւնը“, վարդապետութեան նեղսիրտ պաշտամունքը անհամակրելի է և հակայեղափոխական։ Նա կարող է յանգել անցանկալի ծայրայեղութիւնների, նա տանում է յաճախ դէպի կուսակցական առանձնացում, դէպի անգործութիւն ու անկարողութիւն, դէպի հրաժարում՝ կեանքից, կռւից, փոթորիկներից։ Այդպիսի մի այլանդակ ծայրեյեղութեան էր հասել Դրէյֆուսեան ահաւոր ճգնաժամի ընթացքում ֆրանսիական Գէդիստների կուսակցութիւնը, որը, ինչպէս տեսանք, այն ժամանակ ձեռնպահութիւն էր քարոզում սօցիալիստներին, յայտարարելով, որ կռիւը բուրժուազական է, որ իր՝ Գէդիստ կուսակցութեան համար միևնոյն է՝ լինի երկրի մէջ հանրապետութիւն, թէ սահմանադրական միապետութիւն, լ ի ն ի ե ր կ ր ի գ լ ո ւ խ ը մ ի Լ ո ւ բ է, թ է մ ի Վ ի լ հ է լ մ։

Այդ վնասակար անհեթեթութիւնը, որ կուսակցական կրքի արդիւնք է, այսօր ջրւած է արդէն։ Ժօռէսից յետոյ լսւեց գերմանական „ուղղափառութեան“ կենտրօնական օրգան՝ Vorwärts-ի հեղինակաւոր ձայնը, որը զայրոյթով դատափետեց Գէդի ու Բէբէլի խախուտ պատճառաբանութիւնը և արդարացրեց Ժօռէսին։ Նա նշաւակեց Գէդի անտարբերութիւնը կղերականութեան և միլիտարիզմի դէմ յայտարարւած կռւում և հասկացրեց, որ գերմանական Սօցիալ-դէմօկրատիան ոչ մի առնչութիւն չէ կարող ունենալ Ժիւլ Գէդի հետ։

Ո՜վ զարմանք... Vorwarts այսօր աւելի հեռու է գնում Ժօռէսի օգտին արած իր փաստաբանութեան մէջ։ Քիչ առաջ մինիստրական թեթև ճգնաժամ էր Ֆրանսիայում. Կօմբի արմատական կառավարութիւնը, զինւորական մինիստրի մի քանի ծանր վրիպումների շնորհիւ՝ մի վայրկեան յայտնւեց անկման վտանգի մէջ։ Ժօռէս զգաց վտանգի ծանրութիւնը և բեմ դուրս եկաւ. պարզեց ներկայ մինիստրութեան արած ու անելիք ծառայութիւնները, նկարագրեց և նրա տապալման հեռապատկերը, ուժգին կոչ արաւ ձախակողմեաններին և, կարելի է ասել, փրկեց մինիստրութիւնը։

Տառամոլ ուղղափառները դարձեալ որոտացին „բուրժուա“ Ժօռէսի դէմ, Կաուցկի գրեց դարձեալ մի շանթարձակ մեղադրական, իսկ Vorwarts ծափահարեց Ժօռէսին...

Այո, կեանքը ուժեղ է թէօրիաներից... Ժօռէսը պաշտպանում է և չէ կարող չպաշտպանել մի մինիստրութիւն, որի նմանը Ֆրանսիան չէ ունեցել և որը կղերականութեան ամեհի վիշապին խոնարհեցնելուց յետոյ՝ պատրաստւում է այժմ ի կատար ածել մի շարք արմատական, վաղուց բաղձացւած ռէֆօրմներ, որոնք սարսափեցնում են ռէակցիային։

Ժօռէս թև է տալիս այդ մինիստրութեան և միաժամանակ ազդարարում է ամէն առթիւ, բարձրաձայն, առանց վերապահութեան՝ որ սօցիալիստական կուսակցութիւնը իր իդէալն ունի, որը նա երբէք չպիտի մոռացութեան տայ, որ բուրժուա-ռամկավարութեանը աջակցելով՝ նա մի վայրկեան անգամ չպիտի լքանէ „դասակարգային կռւի“ տեսակէտը, իր կուսակցական ինքնուրոյնութիւնը և դիսցիպլինը, իր կօմունիստական դաւանանքը։

Ժօռէս ազդարարում է այդ բոլորը և շարունակում է տենդային եռանդով յորդոր կարդալ սօցիալիստական հակառակորդ թևին՝ Գեդի ու Վայանի կուսակցութիւններին՝ միանալ, ձուլւել ի մի հզօր սօցիալիստական ամբողջութիւն, որը, ըստ Ժօռէսի, հնարաւոր է „միջազ-

գային կոնգրէսների խարիսխի վրայ“ և որի իրականացումը, ինչպէս Բէբէլն էր ասում համաժողովի փակման ճառի մէջ, պիտի լինի „ամենաբախտաւոր երևոյթը միջազգային սօցիալիզմի կեանքում“։

Ամստերդամի կոնգրէսի ճնշման տակ՝ Գէդը համակերպեց — և այսօր միութեան բանակցութիւնները սկսած են արդէն. . .

---

# Թ Ե Ր Թ Օ Ն

## ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

### „ՃԵՐՄԱԿ ԳԻՐՔ“

Դիւանագէտի ձեռքով խմբագրուած, բաւականաչափ մանրամասն, քաղաքական այդ դօկումենտը նուիրուած է ամբողջապէս Տաճկահայաստանի անցքերին, սկսած 1903 թուի հոկտեմբեր 16-ից մինչև 1904-ի յուլիսի 31-ը։

Հետաքրքրական է, թէ ինչպէս են ներկայացուած այդ անցքերը մի մեծ պետութեան գործակալների կողմից, ինչպէս են նրանք վերաբերւում հայ յեղափոխական շարժումներին, և ի՞նչ չափով են այդ շարժումները անդրադառնում դիւանագէտների տրամադրութեան վրայ։

Մխիթարական — աւա՜ղ — շատ բան չենք գտնում այդտեղ։ Դիւանագիտութիւնը ընդհանուր առմամբ մնում է հաւատարիմ իր վաղեմի ընթացքին, միշտ ներողամիտ թիւրք կառավարութեան դիմաց, միշտ խստապահանջ հայ յեղափոխականների նկատմամբ։ Իրաւ է, որ նա այլևս առաջւայ պէս չէ նայում այդ վերջինների վրայ,—յեղափոխականների ու նրանց կռիւների մասին „Ճերմակ գիրքը“ խօսում է պատկառանքով, երբեմն հիացումով... Իրաւ է միւս կողմից, որ դիւանագիտութիւնը թոյլ չի տալիս այլևս, որ դահիճը շատ հեռու գնայ իր գազանութիւնների մէջ, նա արգելք է լինում 1895-ի աղէտների կրկնութեան,—մի թեթև սփոփանք վշտահար ու լքուած ժողովրդի համար—բայց նա վճռական քայլեր չէ անում հարցի գործնական լուծման տեսակէտից, նա չէ աշխատում սահման դնել քրդի ու թիւրքի ամենօրեայ աւերածներին, նա չէ հոգում կանխելու խմբական սպանութիւնները, նոյնիսկ այն դէպքերում, երբ ինքը տեղեակ է բարբարոս կառավարութեան ծրագիրներին...

„Սասունի գործերը մի վայրկեան չտար սպառնալի էին— գրում է 1903-ի հոկտեմբերին Էրզրումի անգլիական հիւպատոս Հէմպսն—1894-ի եւ 95-ի կոտորածների յիշողութիւնները [illegible] վառ ապրում են մի երկրի մէջ, ուր [illegible] այնքան յաճախակի են եւ ուր ջղայնութեան ու մոլեռանդութեան զսպումը կախուած է [illegible]։ Նորերս հրաման տրուեցաւ՝ ի գործ դնել զինուորական ուժ Սասունի յեղափոխականների դէմ. . . Բայց լեռներում գործողութիւնների շրջանը անցած է համարեա եւ ձիւնը՝ այս վայրերի մեծ խաղաղարարը, արդէն վերահաս է“։

Այսպէս է հանգստացնում իրազեկ հիւպատոսը Պօլսի իր դեսպանին, որը իր կողմից հանգստացնում է լօրդ Լանսդօունին։

Եւ ապա շարունակում է հիւպատոս Հէմպսն նոյն զեկուցման մէջ.

„Բազմաթիւ հայ խմբեր անցել են Ռուսաստանի սահմանից. նրանցից մի քանիսը մեծ աջողութեամբ հասել են Սասուն, ուրիշները ընդհարուելով յետ են վերադարձել։ Նրանք շատ քիչ պատրաստութիւն են ցոյց տալիս՝ զինաթափուելու եւ ես կարծում եմ, որ նրանց շարժումներից շատերը ձեռնարկուած են, իբրեւ արդիւնք մի տեսակ համաձայնութեան հայ եւ մակեդոնական կոմիտէների միջեւ։ Ցաւալի է, որ սահմանադրական [illegible] կողմից [illegible] չէ ցոյց տրուած խանգարելու նրանց մուտքը Թիւրքիա“։

Ապա գալիս են նոյն հիւպատոսի մի շարք զեկուցումները, որ վերաբերում են Բասենի կռիւներին։ Թիւրքաց կորուստների մասին նրա հաղորդածը չպիտի զարմացնէ մեզ, քանի որ առնուած է թրքական աղբիւրից։

„Ռուսաց սահմանի մօտ տեղի ունեցած ընդհարում է տեղի ունեցել հայ յեղափոխականների եւ թիւրք զօրքերի միջեւ։ Առաջինները՝ թւով 80 հոգի, որոնցից 60-ը ձիաւոր։ Հայերը բաժանուած երեք մասի՝ բռնել են [illegible] գիւղեր, սկսել է կռիւ թիւրք ջոկատի հետ, որ տեւել է մի ամբողջ օր։ Հայերը ցրուել են, թողնելով շատ սպանուածներ ու վիրաւորներ. թիւը ստոյգ յայտնի չէ։ Զօրքերից սպանուել են՝ մէկ հարիւրապետ, մէկ յիսնապետ, 5-6 զինուորներ. վիրաւորուել են երկու սպաներ եւ մի քանի ժանդարմներ։

„Լուրը դէպքի մասին ուշ հասաւ Էրզրում, որովհետեւ հայերը կտրել էին հեռագրաթելերը։

„Վալին անմիջապէս [illegible] երկու փաշա [illegible] եւ մի փոքրիկ ջոկատ հեծելազօրք՝ կարգը վերականգնելու համար. Հրամանատարն է՝ ընդունակ ու կրթուած մի սպայ... Կարծում են, որ հայերը անցել են սահմանի միւս կողմը եւ որ կռիւը վերջացած է։

„Ըստ ստուգութեան, լուրերը հասան Էրզրում շատ չափազանցուած ձեւով. առաջ եկաւ խիստ յուզմունք ու երկիւղ։ Բայց վալին անմիջապէս ձեռք առաւ բոլոր անհրաժեշտ միջոցները՝ անկարգութիւնների առաջն առնելու համար“։

Նոյն հիւպատոսը զեկուցանում է հոկտեմբերի 16-ին.

„Մի երկրորդ հայկական արշաւախումբ, բաղկացած 51 հոգուց, անցել է սահմանը եւ ընդհարուել է մի թիւրք ջոկատի հետ Գոմաձոր գիւղում։ Կռիւը տեւել է ամբողջ օր։ Այդ խումբը եւս ցրուել է, թողնելով մի քանի դիակներ ու վիրաւորներ. Զօրքից սպանուած է մի հարիւրապետ եւ [illegible] կորուստներ դեռ յայտնի չեն։ Մանրամասնութիւնները պակասում են, որովհետեւ հեռագրական թելերը դարձեալ կտրուած են“. . .

Պատմում ենք ժամանակագրական կարգով.

Հոկտեմբերի 21-ին Կ. Պօլսի անգլիական դեսպանը հեռագրում է արտաքին գործերի մինիստր Լանսդօունին.

„Ամսոյս 17-ին հեռագիր ստացայ Խարբերդի մեր փոխ-հիւպատոսից, որը հաստատում է, թէ Խարբերդի ֆրանսիական հիւպատոսի եւ ուրիշ պաշտօնական անձերի ստացած տեղեկութիւնների համեմատ՝ այդ գաւառում նկատելի է ծայրայեղ գրգռում քրիստոնեաների դէմ։ Ես տեսնուեցայ այդ առթիւ արտաքին գործերի մինիստրի հետ, եւ նա խոստացաւ հեռագրով հրահանգել, որ ձեռք առնեն բոլոր նախազգուշութիւնները՝ քրիստոնեաներին հովանաւորելու համար“։

Նոյն դեսպանի մի այլ հեռագրական զեկուցում, ուղղուած Լանսդօունին, հոկտեմբերի 23-ին, վերջանում է հետեւեալ տողերով.

„Կռիւներ այլեւս տեղի չեն ունեցել սահմանի մօտերը, եւ թւում է թէ ամէն բան խաղաղ է այնտեղ։ Սակայն ասում են, որ յեղափոխականների մի պատկառելի թիւ անցել է Սասուն կամ թաքնուել է գիւղերում։ Հիւպատոս Հէմպսն ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրայ՝ որ կռուի գործողութիւնների միջոցին զօրքը չէ գործել թալանի կամ վայրագութիւնների։ Հէմպսոնից ես ստացել եմ մի զեկուցում, որի համեմատ կառավարութիւնը հրաժարուել է իր դիտաւորութիւնից՝ սկսելու յարձակողական գործողութիւններ Սասունի յեղափոխականների դէմ, եւ զօրքերը իջել են լեռներից“։

Հոկտեմբերի 9-ին հիւպատոս Հէմպսն Կ. Պօլսի իր

դեսպանին ուղղած մի մանրամասն հեռագրի մէջ, կրկին անգամ ծանրանալով Բասենի կռիւների վրայ, աւելացնում է.

„Ինչպէս երեւում է, հայերը կռուել են յուսահատ կերպով. վալին պատմեց ինձ մէկ հայի մասին, որը վէց գնդակներով վիրաւորուած եւ գետնին փռուած լինելով՝ շարունակում էր կրակել իր ատրճանակը“։

Ճշմարտախօս վալին իմացել է, ի հարկէ, և անհեթեթ ստեր յօրինել, որոնց թերեւս հաւատացել է միամիտ անգլիացին։ Հէմպսն հաղորդում է նոյն հեռագրի մէջ.

„Արշաւախմբերը, ասում են, կազմուած էին գլխաւորապէս Պարսկաստանի հայերից եւ նրանց խօսած լեզուն էր վրացերէն։ Նրանց մեղադրում են, թէ գործ էին դնում բարբարոսութիւններ, թէ կտրում էին մահմէտական գիւղացիների քթերը եւ այլն“։

Հոկտեմբերի 19-ի հեռագրով՝ Էրզրումի հիւպատոսը ուզում է բնորոշել հայ յեղափոխական կազմակերպութիւնը.

„Շատ դժուար է, ասում է նա, ձեռք բերել արժանահաւատ տեղեկութիւններ հայ յեղափոխականների կամ „ֆէտայիների“ քանակութեան, կազմակերպութեան ու ծրագիրների մասին Սասունում. եւ մեծ վարանումով է, որ հաղորդում եմ ձերդ գերազանցութեան հետեւեալ մանրամասնութիւնները, որ հասել են ինձ.—

„Ֆէտայիները վերջերս խիստ աճել են թւով եւ ուժով։ Ասում են, որ նրանց թիւն է այժմ 5-6,000.—բոլորն էլ լաւ զինուած, մարզուած ու կազմակերպուած։ Նրանք կատարելապէս տէր են Մշոյ դաշտից դէպի հարաւ գտնուող լեռներին եւ նրանց իշխանութիւնը տարածւում է դաշտի շատ գիւղերի վրայ եւ նոյնիսկ Մուշ քաղաքի մի ընդարձակ մասի վրայ։

„Նրանց առաջնորդ Անդրանիկը մի շատ ճարպիկ մարդ է, որին հնազանդւում են բացարձակօրէն։ Զինուորական կազմակերպութիւնը ղեկավարում է Տումանով *) անունով կովկասցի մի հայ, որը եղել է ռուսաց զօրքի մէջ, եւ ինչպէս ասում են, եղել է սպայ։

„Թէ ինչ կարող է լինել ֆէտայիների ծրագիրը,—ես անկարող եմ ասել, բայց եթէ այս տեղեկութիւնները ստոյգ են, անհերքելի է թւում, որ մօտ ապագայում նրանք նշանաւոր դեր պիտի խաղան այս կողմերում“։

Նոյեմբերի 16-ի իր հեռագրի մէջ Էրզրումի հիւպատոսը խօսում է քրդերի բռնած դիրքի մասին.

„Մի նոր գիծ է մուտք գործել ընդհանուր դրութեան մէջ վերջին ամիսների ընթացքում,—դա քրդերի աշխատակցութիւնն է հայերի հետ։ Շատ յայտնի իրողութիւն է, որ եթէ թիւրք կառավարութիւնը այս ամառ հրաժարուեց Սասունի վրայ յարձակուելու մաքից,—դրա պատճառներից մէկն էր քրդերի անսպասելի դիրքը, որոնք մերժեցին իրենց աջակցութիւնը առաջարկուած յարձակման համար։ Եւ իմ ֆրանսիացի պաշտօնակիցը այժմ հաղորդում է ինձ, որ քրդերի ու հայերի միջեւ մի քանի ժամանակից ի վեր սկսուած բանակցութիւնները որոշել են, իր կարծիքով, որ քրդերը պէտք է պահպանեն խիստ չէզոքութիւն։ Երկու փաստ վկայում են այդ կարծիքի հաւանականութիւնը. 1) Քրդերը, մանաւանդ Սայիթի (?) քրդերը այս աշնան աջակցում էին Սասունում զօրքերից պաշարուած ֆէտայիներին, հասցնելով նրանց ուտելու պաշար. 2) Յեղափոխականների գործածութեան տակ գտնուող զէնք ու ռազմամթերքը պատրաստուել են բաւական քանակութեամբ՝ հայ արհեստաւորների ձեռքով, որոնք ապրում են այն շրջանի քրդական անձերում“։

Անցնում ենք խոշոր, ընդհանուր գծերով։

Դեկտեմբերի 28-ին Թաւրիզի անգլիական հիւպատոսը զեկուցանում է.

„Վերջին մի քանի շաբաթների ընթացքում հայ յեղափոխականների մի պատկառելի թիւ անցել է Ռուսաստանից Պարսկաստանի վրայով Թիւրքիա։ 40-50 հոգի անցել են Թաւրիզով—դրանց հետ եւ առաջնորդները—եւ մօտ 200 հոգի բռնել են ուրիշ ճանապարհներ։ Մեծ թւով հրացաններ, որ յեղափոխականները գնել են ռուսաց զինարաններից, նոյնպէս փոխադրուել են թիւրքական սահմանով, մի կաշառուած քիւրդ ցեղապետի միջոցով. եւ պատրաստութիւններ են տեսնւում ապստամբութեան համար, գարնանը, Վանի շրջանում։ Ես տեղեկութիւն ունեմ, որ հայերը աշխատում են համոզել քրդերին միաժամանակ ապստամբելու սուլթանի դէմ“։

Փետրուարի 23-ին անգլիական դեսպանը Կ. Պոլսից հեռագրում է մինիստր Լանսդօունին.

„Դուք ստացել էք յուղիչ լուրեր՝ քրիստոնեաների ու մուսուլմանների ընդհարումների եւ յեղափոխականների գործունէութեան մասին Սասունի շրջանում։ Հաղորդում են, որ Խնեցիան (?) գիւղում մի քանի մուսուլմաններ են սպանուած։

„Մեծ վէզիրին արած իմ շատ լուրջ ու կրկնակի դիմումների միջոցին, ես խնդրեցի նրան, որ քրդերը պահուեն սանձի տակ եւ որ եթէ զինուորական գործողութիւնները անխուսափելի դառնան, նրանք սահմանափակուեն կանոնաւոր զօրքով։ Նորին բարձրութիւնը հաւատացրեց, որ ծայրայեղ միջոցների դիմելու վտանգը չկայ“։

Լանսդօուն ի պատասխան դրան՝ հեռագրում է դեսպան Օկօնօրին.

„Կատարեալ հաւանութիւն եմ տալիս ձեր արած քայլին, որով մեծ վէզիրի ուշադրութիւնն էք հրաւիրում խնդրի վրայ եւ հրահանգում եմ ձեզ շարունակել խորը հասկացնել թիւրք կառավարութեանը այն վտանգը, որ կապուած է այս ու այն յախուռն, բռնի գործողութիւնների հետ՝ ուղղուած հայերի դէմ։

(Կը շարունակուի):

# ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

## ԼԵՀԱՍՏԱՆԸ ԲՌՆԿՈՒՄ Է

—

Անսովոր յուզումների թատր է վերջերս ռուսական Լեհաստանը։ 1863 թուի հերոսական ապստամբութիւնից ի վեր լեհ ժողովուրդը վկայ չէր եղել այդպիսի ուժեղ բռնկումների։

Ահա սովորական անցքերի հակիրճ ամփոփումը, որ մենք ստացանք Լեհական Սօցիալիստ կուսակցութեան օրգան՝ Przedświt-ի խմբագրութիւնից.

„Նախ քան զօրաշարժ սկսելը մեր կուսակցութիւնը հրատարակեց տասնեակ պրոկլամասիօններ, հազարաւոր օրինակներով՝ ուղղուած լեհ ժողովրդին, պահեստի զինուորներին։ Պրոկլամասիօնները յորդորում էին՝ չգնալ, դիմադրել։ Գրաւոր յորդորներին ոյժ տալու համար՝ կազմուեցին մեր նախաձեռնութեամբ հրապարակական բողոքի ժողովներ՝ Վարշավայում, Դոմբրովայի, Լօձի, Չենստօխօվի, Լիւբլինի շրջաններում։ Ոստիկանութիւնն ու զօրքը ամէն տեղ միջամտեցին և վայրագօրէն ճնշեցին։ Բազմաթիւ սպանուածներ ու վիրաւորներ մանաւանդ լեհերի կողմից։ Պատերազմի կոչուածների մեծամասնութիւնը գնաց։ Բայց հազարաւոր երիտասարդներ դասալիք եղան, փախան արտասահման։

„Խրախուսուած իր առաջին աջողութիւնից՝ կառավարութիւնը որոշեց զէնքի կոչել ամբողջ Լեհաստանի պահեստի զինուորներին։ (Մինչ այն կանչուած էին 19

*) ԾԱՆՕԹ.—Անյարկւած է հանգուցեալ Թորգոմը։

շրջաններում միայն): Այն ժամանակ մարտական կուսակցութիւնը որոշեց կազմակերպել զինուած ցոյց: Նա տեղի ունեցաւ Վարշավայի մէջ և ունեցաւ ահագին շառաչում: Հոկտեմբեր 31-ի կէսօրին էր, Գրզիբօվսկա հրապարակի մեծ տաճարից ժողովուրդը խուռն բազմութեամբ դուրս գալու միջոցին՝ բարձրացաւ կարմիր դրօշակը, մի կողմում գրած՝ „Ձենք ուզում ցարի զինւոր լինել“, միւս կողմում՝ P. P. S. (Լեհական սոց. կուսակցութիւն): Հէնց որ ցուցարարների կորտէժը սկսեց առաջ ընթանալ, ոստիկանութիւնը վրայ հասաւ սրերով, բայց նրան դիմաւորեցին ատրճանակների միահամուռ հարուածներով, որոնք անասելի շփոթութիւն ձգեցին թշնամու շարքերի մէջ. մի քանի զինւորներ ընկան: Ցոյցը ստացաւ կանոնաւոր կռւի կերպարանք: Տեսարանը վեհ էր, տպաւորիչ: Զօրքը եկաւ ճնշեց, բայց բազմաթիւ մասնակի կորտէժներ սալքւեցին ու անցան քաղաքի զանազան կողմերով և ամբողջ օրւայ ընթացքում ատրճանակի որոտումներ էին լսւում Վարշավայի փողոցներում: Հետևանքը՝ 17 սպանւած և 70-ի չափ վիրաւոր: Այդ թւի կէսը պատկանում է ոստիկանութեան:

„Գործը, իհարկէ, սրանով չի վերջանայ: Յուզումը մեծ է ամբողջ Լեհաստանում և նոր-նոր ա ն ց ք ե ր ը անխուսափելի են“:

Վերջին պահուն հեռագիրը ծանուցանում է, որ շուտով նոր ցոյց կը լինի. բանւորների ձեռքը տրուած է 6000 ատրճանակ: Ոստիկանութիւնը ստիպուած է արձակել շատ բանտարկեալներ, որովհետև բանտերը լեփ լեցուն են:

*

Երկրից մեզ հաղորդում են.

Հայ յեղափոխական խմբի մի մասը Նարեկ գիւղում պաշարւեց Ոստանի 40-45 զինւորների կողմից: Լուր առնելով՝ մեր ընկեր Իշխանը յանկարծակի յարձակւում է պաշարողների վրայ, 6-7 հոգի սպանում, միւսներին փախցնում: Գիւղի երիտասարդները այդ դէպքից յետոյ՝ շատ զգուշաւոր դիրք են բռնում, սպասելով նոր յարձակման: Բայց շուտով Վանից հասնում է ամերիկեան միսիօնէրը և կառավարութեան կողմից յորդորում գիւղացիներին հանգիստ մնալ, խոստանալով կատարեալ ապահովութիւն:

Մշոյ դաշտի Խօնճալու գիւղում ֆէդայիները յարձակւեցին մի տաճկական ջոկատի վրայ, որ թնդանօթ էր տանում: Հայերի միահամուռ յարձակմանը չդիմանալով՝ ջոկատը ցրւում է, թողնելով բազմաթիւ սպանւածներ ու վիրաւորներ:

Ղամիրամ գիւղում հայ յեղափոխականները պաշարւում են Կռտան Ալի բէկի կողմից: Կռիւը տևում է 14 ժամ: Խումբը գիշերով պատռում է շղթան և անցնում, զոհ տալով Դաշտեցի Պետրոսին:

*

Կ. Պոլսից մեզ գրում են.

„Կարմիր Սուլթանը յղացել է մի նոր դիտաւորութիւն,— իր Բիւրհանէդդին որդուն գահաժառանգ նշանակել: Ինչպէս յայտնի է, օսմանեան թագաւորող ցեղի մէջ գահը ժառանգում է իշխող տան մեծը, հետևաբար, կանոնով, Սուլթան Համիդի մահից յետոյ այդ գահի ժառանգութիւնը պիտի անցնի իր եղբօր՝ Րէշիդ էֆէնդուն: Սակայն Համիդ՝ ցանկանալով աջողացնել իր որդու ժառանգութիւնը, այժմեանից սկսել է մտածել այդ մասին և երևի աջողութիւն է գտնելու, ինչպէս ցոյց են տալիս իր արած քայլերն ու դէպքերը:

„Նախ ուզում է թագաժառանգ Րէշիդ էֆէնդու անունը ջնջել և նրան բոլորովին չեզոքացնել: Րէշիդ էֆէնդու անունը հանգուցեալ Սուլթան Ազիզի և Մուրադի անունների նման Թիւրքիայում երբէք չէ յիշւելու. Ճիշտ այդ նպատակով և յետին մտքով, Սուլթանը՝ երբ ելևմտական նախարարութիւնը յանձնեց ներկայ նախարարին, նրան էֆէնտիութիւնից յանկարծ փաշայութեան բարձրացրեց, որովհետև նախարարի անունն էլ Րէշիդ էր և որպէս զի Րէշիդ է ֆ է ն դ ի կոչւելով այդ անունը չյիշեցնի թագաժառանգ Րէշիդ էֆէնդու անունը (կայսերական գերդաստանի անդամները էֆէնտի են կոչւում):

„Սուլթանը նոյնիսկ չէ ուզում, որ Րէշիդ անունը ոեւէ պաշտօնեայի տակ յիշւի՝ լինի էֆէնդի կամ փաշայ: Այս առթիւ յիշենք հետևեալ յատկանշանական դէպքը: Երբ Եգիպտոսի խդիվը վերջին ժամանակներս Պոլիս այցելեց, ի պատիւ նրան պալատի մէջ ճաշկերոյթ տրւեց. ներկայ էին բոլոր նախարարները և խդիվի հետևորդները: Թիւրք թերթերը ճաշկերոյթին ներկայ գտնւողների անունները պաշտօններով և իսկական անուններով յիշելով, երբ կարգը գալիս է ելևմտից նախարար Րէշիդ փաշայի անւան, յիշատակում են նրան միմիայն իր պաշտօնի անունով, առանց իսկական անունը տալու: Այսպէս,— Մալիյէ նազըրը տէօվլէթլու փաշա հազրէթլէրի — (Ելևմտից նախարար վսեմ. փաշան): Եւ այս ցանկը, պէտք է գիտնալ, ուղղակի պալատից է եկել հաղորդւած թերթերին:

„Թագաժառանգ Րէշիդ էֆէնդու վրայ այժմ խիստ հսկողութիւն է նշանակւած. վերջերս նրա ներքինապետին և մի քանի ծառայողներին սուլթանը աքսորեց, այն պատրւակով թէ մի գինւոր նամակ է տարել նրա տունը:

„Լուր է պտտում, որ սուլթանը շուտով հանգուցեալ Մուրադ էֆէնդու վիճակին է հասցնելու թագաժառանգ Րէշիդ էֆէնդուն, նրան բանտարկելով այն պալատում, որտեղ բանտարկւել էր և վախճանւեց նախկին սուլթան Մուրադը, որից յետոյ ջանք պիտի թափէ իր Բիւրհանէդդին որդին թագաժառանգ նշանակելու և եւրոպական տէրութիւններից հաստատելու նրա թագաժառանգութեան օրինաւորութիւնը: Ծրագրի յաջողութիւնը գրեթէ ապահովւած է, որովհետև ներկայ նախարարները և Շէյխ-իւլ-իսլամը չեն կարող հակառակել սուլթանին և ստիպւած պէտք է վաւերացնեն այդ առաջարկը: Հանգուցեալ սուլթան Ազիզն էլ աշխատեց իր որդուն Իւսուֆ-Իզզէդդին էֆէնդին թագաժառանգ նշանակել տալ, սակայն այն ժամանակւայ նախարարները և Շէյխ-իւլ-իսլամը հեղինակութիւն ունէին և բացարձակապէս մերժեցին Ազիզի խնդիրքը. իսկ ներկայ նախարարները Կարմիր Սուլթանի ձեռքում պարզ գործիքներ են“:

*

Կ. Պոլսից հեռագրում են եւրոպական մամուլին.

„Ռուս-թրքական սահմանագլխին քրդական մի աւազակախումբ յարձակում գործեց, թալանելու նպատակով, մի ռուս գիւղի վրայ, բայց կօզակները հալածեցին նրանց մինչև տաճկական սահմանագլուխը: Ազատւած քրդերը հաղորդեցին թիւրքաց սահմանապահ զօրքին, թէ իրենց հալածողը հայ յեղափոխականներն են: Այդ պատճառով թիւրք զինւորները կրակ բաց արին կօզակների վրայ. մի քանիսը սպանւեցին, շատերը վիրաւորւեցին: Կ. Պոլսի ռուսական դեսպանատունը դեռ ևս չունի այդ միջադէպի մասին մանրամասն զեկուցում իր գործակալներից: Կայ միայն հակիրճ տեղեկութիւն Էրզրումի վալիից և ռուս հիւպատոսից: Երկու կողմից պատրաստւում է քննութիւն“:

*

„Արմենիա“ լրագիրը, որի հիմնադիրը՝ Պ. Մկրտիչ

Փորձուղալեան Վասպուրականի յեղափոխական անդրանիկ գործիչներից մէկն է, այս տարի տօնեց իր գոյութեան 20-ամեակը։

*

Գերմանական Bresl. Zeitung-ի մէջ կարդում ենք Աղթամարի կղզու մասին հետեւեալ տողերը.

„Այժմ միայն ստացուած են հիւպատոսական տեղեկագիրներ՝ այն մոլեգին յարձակման մասին, որ արել է հայ յեղափոխականների կատաղի առաջնորդ Անդրանիկը՝ Վանայ լճի վրայ գտնուող Աղթամարայ փոքրիկ կղզու վրայ։ Լճի շուրջը զանազան պտոյտներ գործելուց յետոյ՝ Անդրանիկը իր մարդիկներով մի քանի նաւ առած և հայ յեղափոխական դրօշակը պարզած՝ փոխադրւում է վերոյիշեալ կղզին, գրաւում է այնտեղի վանքը և վանքի վրայ եւս ծածանեցնում է յեղափոխական դրօշը։

„Այդ լուրը առնելով՝ մի քանի օր յետոյ ուղարկւում է տաճկական մի զօրեղ ջոկատ՝ Անդրանիկին դուրս քշելու համար։ Մօտ 30 թնդանօթի հարուածներ տեղացին կղզու վրայ, որոնցից չորսը միայն հասան նրան, այն էլ առանց ոեւէ վնաս պատճառելու։ Հետեւեալ օրը Անդրանիկը թողեց կղզին նոյն ձեւով, ինչ ձեւով եկել էր այնտեղ։ Այդպիսով նա մի քանի օր տէր մնաց կղզուն։ Այն ժամանակ միայն թիւրքերը յետ վերցրին կղզին. քրդերը այդ միջոցին վայրագութիւններ գործեցին։

„Վան քաղաքից եւս տեղեկութիւններ են գալիս մի հետաքրքրական էպիզոդի մասին, որ տեղի է ունեցել մօտ մի ամիս առաջ։ Մէկ ժանդարմի սպանութեան առթիւ,— սպանութիւն, որ իրաւամբ հայերին է վերագրւում — մահմետականների մէջ սկսեց մեծ յուզում։ Երիտասարդ տարրերը հաւաքեցին և ուզում էին յարձակւել հայերի վրայ։ Մի տեղ նոյնիսկ երկու տներ վառեցին։ Հեռատես վալին՝ դէպքերի առաջն առնելու համար՝ հրապարակով ծանուցեց, որ նրան հարկաւոր են 300 կամաւորներ՝ մահմետականներին պաշտպանելու համար։ Կամաւորները անմիջապէս ասպարէզ եկան յուզուածների շարքերից. նրանք առ երեւոյթս ընդունւեցին վալիից, սակայն մի քանի օրից յետոյ, երբ յուզմունքն անցաւ, նորից արձակւեցին“։

*

Հոկտեմբերի 27-ին, երբ ռուսաց լուսաւորութեան մինիստրը Վարշավայով անցնում էր՝ նրան ներկայացաւ լեհական մի պատգամաւորութիւն՝ խնդրելու, որ մասնաւոր դպրոցներ հիմնելու պայմանները մեղմացնեն և թոյլ տան աշխարհագրութիւնն ու պատմութիւնն աւանդել լեհերէն։ Մինիստրը պատասխանեց, թէ Սվեատօպոլկ-Միրսկու ծրագրին իր կողմից տուած հաւանութիւնը պէտք է նկատել իբր երաշխիք խնդրի գոհացուցիչ լուծման համար։

*

Ուսանողական խառնակութիւնները վերսկսւում են։ Հոկտեմբերի 31-ին, տեղի ունեցաւ ուսանողական մի մեծ ժողով Պետերբուրգի համալսարանում։ Խօսեցին ռուս-ճապօնական պատերազմի դէմ և միաձայն պահանջեցին նրա անմիջական դադարեցումը։

*

Սեպտեմբերի 9-ին Օդեսայի գլխաւոր փողոցներից մէկում սպանութեան փորձ եղաւ քաղաքապետ Նէյգարտի վրայ։ Փորձը անաջող եղաւ։ Զարնող երիտասարդը ձերբակալւած է։ Նրա անունն է Պօլիակով։

*

Կազանի համալսարանում, հանդիսաւոր նիստի միջոցին, մի հայ ուսանող ընդհատեց պրոֆէսորի ճառը, կոչելով. „Այդ չէ, որ հարկաւոր է մեզ“։ Անմիջապէս բեմ բարձրացաւ ուսանողների մի խումբ և պարզելով կարմիր դրօշակը „Մարսէլիէզ“ հնչեցրեց։ Դրանից յետոյ ուսանողները ուղեցին կորտէժ կազմել և խմբովին ուղղւել դէպի թատրոն, բայց ոստիկանութիւնը ցրւեց նրանց։ Ոչ մէկը չձերբակալւեց։ Նոյն օրը, երեկոյեան, աստուածաբանութեան ֆակուլտէի մէջ պայթեց մի վառարան, որի մէջ վառօդ էին դրել։ Վիրաւորւած չկայ։

*

Ռուսաց պահեստի զինւորները՝ Վօլօգտայի նահանգից Մոսկւա բերւելիս՝ ըմբոստացան. նրանք քարեր ու փայտի կտորներ նետեցին զօրքի վրայ, որը եկել էր վերականգնելու կարգը։ Վիրաւորւեցին 4 օֆիցէրներ և 9 զինւորներ։ Զօրքը նախ օդի մէջ կրակեց, բայց ապարդիւն անցնելով՝ գնդակներ տեղաց ըմբոստ ռեզերվիստների վրայ։ Երկուսը սպանւեցին և վեցը վիրաւորւեցին։

*

„Ռուսսկ. Վէդօմօստի“ ազատամիտ լրագիրը հետեւեալ կարծիքն է յայտնում.

„Հայկական ապստամբութիւնը Տաճկաստանում, բոլոր երեւոյթին, կանգ առաւ. գոնէ բաւական ժամանակից ի վեր մամուլի մէջ այլեւս չեն երեւում լուրեր զինւորական գործողութիւնների մասին, իսկ վերջին նորութիւնը ապստամբութեան թատրից այն է, որ թիւրքերը կառուցել են լեռների մէջ երկու զօրանոց և չորս փոքրիկ ամրութիւններ՝ որպէս զի անհնարին դարձնեն ապստամբութեան շարունակութիւնը։

„Այն յոյսերը՝ թէ ապստամբութիւնը կը գրաւէ պետութիւնների ուշադրութիւնը բազմատանջ հայ ժողովրդի վիճակի վրայ՝ առայժմ չ'արդարացան, որովհետեւ միջազգային դրութիւնը վերին աստիճանի աննպաստ էր հայերի համար։

„Սակայն ոչ ամրութիւնների շինութիւնը Սասունում, ոչ էլ Եւրոպայի անտարբերութիւնը չեն նշանակում, իհարկէ, թէ հայկական հարցը այլեւս գոյութիւն չունի։ Նա կը շարունակէ իր գոյութիւնը, քանի դեռ Թիւրքիայում կը տիրէ բռնակալութիւնը, քանի դեռ անպատիժ կը մնան հայերի կեանքն ու գոյքը։ Վայ թէ ուշ նրանք դարձեալ կ'ապստամբին՝ պաշտպանելու համար մարդկային ամենատարրական իրաւունքները։ Եւրոպան պէտք է հասկանայ, որ հայոց հարցը չէ կարելի խեղդել ոչ տաճկական թնդանօթներով, ոչ էլ քրդական ուժերով։ Նրա գոհացուցիչ լուծումը կրող միայն Հայաստանի ինքնավարութիւնը“։

Նոյն խնդրի առիթով ռուս „Միր բօժի“ ամսագիրը մէկ յօդւածում գրում է ի միջի այլոց.

„Զարմանալի ոչինչ չկայ, որ հայերը անհնարին գտնելով հասնել արդարութեան ու ապահովութեան՝ օրինական ճանապարհով՝ դիմում են իրենց յեղափոխական օրգանների օգնութեան։

„Սասունի շրջանում գործում է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ներկայացուցիչ Անդրանիկը, որը շատ անգամ արդէն աջողել է յետ մղել տաճիկ զօրքերը։ Բայց նրա ուժերը անբաւարար են և նա չէր կարող արգելք լինել թիւրք և քիւրդ միացած ուժերին՝ աւերելու գիւղերը։ Եւրոպական պետութիւնները հրաժարւում են այդ միջամտութիւնից. դրութիւնը Հայաստանի մէջ միշտ աւելի և աւելի անտանելի է դառնում“։

„Տարակոյս չկայ, որ գործերի դրութիւնը Հայաստանում միշտ աւելի և աւելի բարդանում է, և հայոց հարցը ընդունում է նոյնքան ահաւոր բնաւորութիւն, որքան մակեդօնականը։

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱԶԴԵՐ

## ԱԶԴ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արեւելեան Բիւրօն յայտնում է բոլոր դաշնակցականներին, որ պատկանելով կուսակցութեանս, նրանք, համաձայն իրենց կամքի, որոշ իրաւունքների հետ ստանձնում են և որոշ պարտաւորութիւններ և պատասխանատու են կուսակցութեան առջև, մինչև որ իրենք կուսակցութիւնը ազատ չճանաչի նրանց։ Պատահում են դէպքեր, երբ ունէ դաշնակցականի՝ զանազան պատճառներով անհնարին են թւում իր ստանձնած պարտաւորութիւնները և նա ի ն ք ն ա կ ա մ՝ աշխատում է խուսափել նրանցից։ Կազմակերպութիւնը երկու անգամ նախազգուշացնելուց յետոյ, դատի է ենթարկում այդպիսիներին։ Բայց եթէ նրանք դատից ու պատժից խոյս տալու նպատակով յայտնում են, թէ անցել են ունէ կուսակցութեան շարքերը, ապա այդ դէպքում Դաշնակցութիւնը ազատ է ճանաչում նրանց ունէ պատասխանատուութիւնից միմիայն այն պայմանով, որ նրանք մաքրեն իրենց բոլոր թէ բարոյական և թէ դրամական հաշիւները կուսակցութեան հետ։ Հակառակ դէպքում Դաշնակցութիւնը իր պարտքն ու իրաւունքը պիտի համարէ նրանց պատժելու ըստ արժանւոյն։

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՕ

***

Հ. Յ. Դ. Բագուի Կօմիտէի հրապարակ հանած հինգ ռուբլիանոց տոմսերի խաղարկութիւնը կայացաւ ներկայ 1904 թ. սեպտեմբերի 19-ին։ Շահեցին հետեւեալ համարները.

№ 1431—տասը հազար ռուբլի.
№ 8707—հինգ հազար ռուբլի.
№ 12426—հազար ռուբլի.

| 100-ական ռուբլի | 25-ական ռուբլի | | | |
|---|---|---|---|---|
| №№ | №№ | №№ | №№ | №№ |
| 953 | 11 | 6143 | 9013 | 15375 |
| 2368 | 108 | 6216 | 9346 | 15523 |
| 2500 | 645 | 6256 | 9433 | 15635 |
| 2712 | 774 | 6337 | 9605 | 15763 |
| 2722 | 948 | 6835 | 9905 | 15868 |
| 3674 | 1249 | 7083 | 10277 | 16135 |
| 4522 | 1935 | 7098 | 11367 | 16176 |
| 5177 | 2531 | 7135 | 12204 | 16310 |
| 7556 | 2645 | 7157 | 12456 | 16864 |
| 9982 | 3158 | 7325 | 12460 | 17467 |
| 10505 | 3566 | 7657 | 12468 | 17487 |
| 10625 | 4094 | 7772 | 12571 | 17574 |
| 15156 | 4521 | 7773 | 12609 | 17958 |
| 15395 | 4580 | 7814 | 13454 | 18055 |
| 15548 | 4533 | 8107 | 13617 | 18666 |
| 16018 | 5028 | 8162 | 13978 | 18726 |
| 16532 | 5083 | 8248 | 14028 | 18744 |
| 18463 | 5206 | 8310 | 14268 | 18753 |
| 19340 | 5623 | 8415 | 14571 | 19628 |
| 19814 | 5941 | 8942 | 15303 | 19765 |

Խաղարկութիւնը տեղի ունեցաւ յատուկ յանձնախմբի ձեռքով, կազմւած հասարակութեան վստահութիւնը վայելող չէզոք անձնաւորութիւններից և Հ. Յ. Դ. Բագուի Կենտր. Կօմիտէի երկու ներկայացուցիչներից։

Ամէն մի շահած տոմս պէտք է ներկայացնել Հ. Յ. Դաշնակցութեան տեղական մարմինների միջոցով կամ ուղղակի կերպով Բագուի Կենտր. Կօմիտէին մինչև ներկայ դեկտեմբերի 31-ը՝ տարած գումարը ստանալու համար։ Այդ ժամանակից ուշ ներկայացւած տոմսերը իրենց ուժը կորցնում են, և տարած գումարը չի վճարւիլ։

Հ. Յ. Դ. ԲԱԳՒԻ ԿԵՆՏՐ. ԿՕՄԻՏԷ

Որովհետև այս յայտարարութիւնը ուշ է լոյս տեսնում «Դրօշակ»ի մէջ, արտասահմանեան տոմսակատէրերի վերաբերեալ բացառութիւն է անում։ Նրանք կարող են տոմսակը ներկայացնել մինչև 1915 յունուարի 31-ը (հին տ.)։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

## ՏԵՌՕՐ

Հ. Յ. Դաշնակցութեան Վասպուրականի Կեդրոնական Կօմիտէի վճռով՝ տէւօրի ենթարկւեց Հիւանիի լեռներէն՝ Խ ա չ ա տ ո ւ ր Կ ա խ ե ա ն ը, որը Վասպուրականի Հ. Յ. Դաշնակցութեան զինւորական առենի առաջ խոստովանած էր իր յանցանքը։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷ

Նաւահանգստի և Ոսկանապատի Կենտրոնական կօմիտէների վճռով՝ սեպտեմբերի 26-ի գիշերը, ժամը $8\frac{1}{2}$-ին ատրճանակի երկու հարւածներով, տէւօրի ենթարկւեց յայտնի խաչագող Նուխեցի .Ա. Աբրահամեանցը, որ գարնան սկզբներում երևացել էր Թիֆլիսում և Բագւում վարդապետական տարազով իբրև Պարսկաստանի Նախավկայի վանահայր Տրիֆօն վարդապետ և այդ վանքի անունով հանգանակութիւններ արել։ Կեղծիքը յայտնւելուց յետոյ՝ նա փախչում է հիւսիսային Կովկաս և իր խաչագողութեան նոր ասպարէզ է ընտրում յեղափոխութիւնը և իբրև „շրջիկ գործակալ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան", սպառնական նամակներով փողեր է հաւաքում զանազան քաղաքներում, ծածկւելով „Սմբատ Բագրատունի", „Եղէշէ", „Միխակ Տէր-Վարդանեան" և այլ կեղծ անունների տակ։ Տէռօրիստները ազատ են։

Հ. Յ. Դ. ՆԱՒԱՀԱՆԳՍՏԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԷ

## ՆՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Նւիրատուութեան ցանկերի առատութեան պատճառով ստիպւած ենք ներկայ համարին կցել չորս երես՝ նւիրւած յատկապէս այդ բաժնին։ Դրանց մէջ մտնում են՝ Արևմտեան Բիւրօյի, Վիշապի, Նաւահանգստի, Ատրպատականի, Ջրաբերդի, Ամերիկայի Կեդրոնական կօմիտէների, Ալեքսանդրիոյ, Այգեստանի, Ոսկեհանքի, Ոսկանապատի քաղաքային, նոյն տեղի երկրորդ կօմիտէների և Ռումանիայի Բօրթ քաղաքի հասարակութեան նւիրատուութեան ցանկերը։

Օգտւում ենք հանգամանքից խնդրելու նւիրատուներից, որ ցանկերը մեզ ուղարկեն ըստ կարելւոյն սղւած։

---

**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ** ստացած է՝

Ռ ո ւ ս ա ս տ ա ն. — „Դրամ" կօմիտէէն 11,500 ֆրանք։
Գ ե ր մ ա ն ի ա. Տարմշղատի ուսանողներէն Մ. Շ.-ի միջոցով 35 ֆրանք։

**ՎԻՇԱՊԷՆ՝**

Համակրող 40 ղրշ., Վոնմակ խմբ. 5, Ջանք 20, Դագիկ 10 ղուրուշ։ Գումար 75 ղուրուշ։

Գեղէօն 11. 20, Արազած 6, Միութիւն 1. 80, Շարժական ա. խմբ. 5, Վ. Փ.եանցի կրպակում հաւաք. 6, Պայթող 14. 65, Միութիւն 1. 35, Ա. Վ.-եանցի աղջկ. հարս հաւաք. 14. 50, Զարգանող 4. 95, Գութան 27. 60, Մոծակ 2. 70, Ժիրայր 10, Փունջ 3. 60, Վազգէն 5. 70, Հ. Օ.-եանցի աղջկ. հարս. հաւաք. 12, Կշիռ 20, Մոծակ 2. 70, աղեղնակ 2. 5, Ուժգին 4, Վրէժ 40, Ա. Ա.-ի պսակադր. հանգ. Վրէժ խմբ. միջոց. 37. 10, Մ. Մ.-ից և հարդխականներից 50, Լ.-Տ.-Ռ. ուրախութեան հանգ. Արշալոյս խմբ. միջոց. 9. 11, Մի խո մբ թափառականներ 4, Աշակերտակ. գրակ. «Կայծեր» ընկեր. Ուէր 24, Մ. Լ.-եանցի ուրախ. ժամ. Արշալոյս խմբից 11. 10, Խ. Մ.-եանցի ուրախ. ժամ. Արշալոյս խմբից հաւաք. 4. 15, Ն. Օ.-եանցի հարս. Շարժական խմբ. հաւաք. 4. 50, X.-ից 12, Ռ.-Հ. Մ. ուրախ ժամանակ. Արշալոյս խմբ. հաւաք. 1. 77 ռուբլի։

Ընդհանուր գումար 7,335 ռուբլի 41 կոպէկ։

## ԱԼԷՔՍԱՆԴՐԻՈՅ կոմիտէն՝

Բիէր Արուսեան ապրիլ-օգոստոս ամսավճ. 100 ղրշ. ողջ, Բիլաքոֆ 30, Գ. Զաքէեան 20, Շարլ ճէլիք 20, Խոզանտաղ խումբէն 125, Րաֆֆի խումբ. 153, Ջեռք խումբ. 79, Յունաստանի Կիլիկիայ խումբ. 403, Դալլորիկ խումբ. 43, Սասուն խումբ. 34 ղրշ., Ալէքսանդրիոյ մէջ կատարուած հանգանակութենէն՝ Հայրենամէր 385 ղրշ. ողջ, Խ. Թորգոմեան, Ինժէնէօր 292. 20-ական, Տատուրեան եղբարք 200, Խապշիկ, Գործող, Էդուար Թ., Կարին 195-ական, Արամ Աբրահամովիչ 150, Կրակ, Վահրամ Մամիկոնեան 100-ական, Խորէն Խորենացի, Համբար, Դաւիթ, Ա. Բ., Λ., Գաուից, Սղերդցի հանի Յակոբ Պահուտէեան, Վէրնինի, Աստղիկ, Ալէքսանդրիայի «Հայկական ընդհ. միութենէն»՝ ձեռամբ Տիգրան Տամատեանի՝ Ոմն, Նզօից, Արթին Մուղալեան, Պարոյր 97. 20-ական, Գ. Մ. եղբարք 77, Մոնկոլեան 77, Տիգրան Ասլանեան 60, Ծաղիկ 60, Ալէքսան Մեսրոպեան, Քահանայ ոմն, Կիլիզար 50-ական, Մկրից, Աշտարակեցի, Տօքթ. Թէօֆիլ 48. 30-ական, Յակոբ Պէքարեան, Ա. Ն., Կարիպալտի Անոչիչի, Թ. Թ., Թուչնիկ, Գնթունի, Երկաթ, Ապտակ 40-ական, Մ. Գ., Վասպուրական, Յովհաննէս Ղազարեան, Ոմն 30-ական, Սիսակ, Մկրտիչ Սիւտճեան, Միսաք, Արմենակ Փափազեան, Յարութիւն Շիլիկեան, Աժդահակ, Ծիծեռնակ, Գ. Ճ., Յ. Ղազիկեան, Զէյթունցի Բարթուղիմէոս վարդ., Յակոբ Գարակէօզեան, Գէորգ Տէր Պօղոսեան, Ֆօթօկրաֆ Նիրամ, Սմբատ Գափամաճեան, Մկրտիչ Թարթուշեան, Պարտէզ, Ռուբէն Աղիեայեան, Կարապետ Ուզունեան, Մ. Ա. Փունջ., Ա. Խանճեան, Կոպէռնիկ Պէլեան 20-ական, Լևոն Պալեան, Հաճի Տուտու, Վազր, Պետրոս Սապօնճեան 15-ական, Ե. Հ., Բագրատունի, Գրիգոր Զուլճեան, Բարեսիրտ ոմն, Օհաննէս Սարգիսեան, Ոմն Գ., Բաթաքանեան Մանօ, Սարգիս Մազլմեան, Հաճի Արմենակ, Աճուխ, Մարկոս, Գրիգոր Յակոբեան, Սարգիս Գարակէօզեան, Ոմն Մ. Ա., Վարպետ, Յ. Ս., Բոբիկ ճըգնաւոր, Սազաթիկ, Էլճիաս 10-ական, Յարութիւն Յարութիւնեան, Հաճի Սիմօն, Հաճի Պօղոս, Ծաղիկ, Սարսափ, Պօղոս Թոնազեան, Պետրոս Ապահունի, Մ. Մկրտիչ Մելքոնեան, Նալչա, Կիրակոս Կարապետեան 5-ական, կանանց շրջանին մէջ հանգանակուած ձեռամբ տիկին Փեփրուհի ճերմակեանի և տիկին Գաբրիէլեանի՝ տիկին Թափառիկ 97.20, տիկին Ազնիւ Մարանկօզ 60, տիկին Նուրիկա 40, տիկին Մայր Երկաթի 30, օր. Յուլիանէ 30, տիկ. տիկ. Կարին, Ոմն Թ., Աստուրեան, Կարին, Ոմն Ն., Մառի, Ոմն, Հաճի Աննա, Գործող 20-ական, Զայլաքեան, Պէլեան 15-ական, Թաթարեան, Թաշճեան, Խանճեան, Պզտիկեան, Բատսայ, Խանճեան, Ոմն Աճ., Պէքարեան, Պաղճեան, Ս. Ա., Ոմն, Կալիպարտի Անաչիչի, Երանուհի 10-ական, Կիւրեղեան, Մախթիկ Թաթոսեան, Թիրիաքեան, Վառելիկ Մալխասեան, Իսկուհի Սուքիասեան, Աղաւնի Գաբրիէլեան, Նարկիս Գալայճեան, Բերուզ Պէրպէրեան, Աղաւնի Չլըքէզեան, Անկէլ Ղազարեան, Մանուկեան, Հայկանուշ, Մազլումեան, Սէֆէրեան, Անտօնեան, Կարապետեան, Թաշճեան 5-ական, Էլմաս Ղազարոսեան 8, Բարսեղեան 2, Առանց ընկալագրի 7։ Գումար 6,936 ղրշ. 30 փարա ողջ։

## ԱՅԳԵՍՏԱՆԻ կոմիտէն՝

1904 թ. յունւարի 1-ից մինչեւ 10 յունիս.—

Պ. Խ. Ղ.-ից 500 ռուբլի, Կարմիր-եղցի գիւղի Արծիւ խ. 15, մի խումբ գինւորների միջոցով հանգ. 20, Գետաբերանում Պ. Մ. Յ.-ի միջոցով հանգ. 44. 75, Պ. Օրբասանի միջոցով հանգանակած՝ Բարձր-Խաչ գիւղի հասարակութ. 29. 47, Բուլանիս գիւղում 15, Սլաւ. գաղութի հայերից 15. 50, Բարս. գիւղում 18, Շիբի հանքում Մամռոտ խ. 72, Երկաթ գիւղում 81, Գիւղական քահանայից 3, Աննեն գաղութում հետևեալ անձնաւորութիւններից՝ Պատմոս, Արաքս, Ծերունի 5-ական, Անդրանիկ, Ատաղձագործ, Կտրուկ, Աւետիք և մի Անյայտ 3-ական, Կոշկակար, Շահլամեան, Ճրագ 2-ական, Մստօ, Ծաղիկ, Վարդ, Մանուշակ, Կիլիկիայ, Տարօն, Բիւզանդիայ, Հովւապետ, Ալեգարդ, Կարէն, Կրակ, Միջագետք, Դարբին, Գործող, Արարատ, Փափախ, Դերզիկեան, Ասլան, Վազր, Արհեստաւոր, Առաքեալ, Պղնձագործ, Խանութ, Լոյս, Քաղցրիկ և Արծաթ 1-ական ռ., Ջնծաղիկ 60 կ., Երկաթ, Պողպատ, Պայտ, Մեքենայ, Փառանձեմ, Գութան, Կորիւն, Բաժակ և Ժամացոյց 50-ական կ., Ափսէ 20 կ., Խաչ 20 կ., 10 տարեկան Հերոսուհուց վզի մի ոսկի խաչ, որից գոյացաւ 2. 50 ռուբլի։ Գումար 70 ռուբլի։ Պ. և Տիկ. Կոլ-Մարից ոսկէ և արծաթէ իրեղեններ ու գրքեր, որոնց մի մասի վաճառումից գոյացաւ 41.60 ռ., Որբ՝ Սասնոյ հերոսների օգտին 13, Գայլ նոյն նպատակաւ 3, Բարձր-Խաչ գիւղացի Խ. Գ. 50, Մար-Շիմոն ա. խմբի ամսավճ. 44. 30, Թանգեան 5, Զինուոր Մ.-ի միջոց. հանգ. 17, Մ. Մ.-եանցի միջ. Գետաբերանում հանգ. 142, Նոյն պարոնի միջ. Գետաբերանի *** խմբի ամսավճ. 20, Որբ կրկին Ուէր 5, Մելիքի միջ. հանգ. 5. 50, Նփրեմ 10, Դանիէլ 100, Նամուս խ. 5, Ղարիբ 15, Րաֆֆի խ. 10, Մար-Շիմօն բ-րդ խ. 15, Խայթ խ. 14, Պետօյի միջ. Մար-Շիմօն 2-րդ և 3-րդ խմբ. 20, Աննեն գաղութի Դժոխք խ. 5, Ղ. Մ.-եան 50, Բարօ 2. 10, Գետաբերանի Փարոս խ. 20, Բարձր-Խաչ գիւղի Յոյս խ. 4 ամսավճար 20 ռուբլի։ Ընդամէնը 1,516 ռուբլի 22 կոպէկ։

## ՈՍԿԵՀԱՆՔԻ կոմիտէն՝

1904 ապրիլ 1-էն մինչև սեպտեմբեր 30.—

Պալսամօ 69 դահեկան ողջ, Զինուորական և իր ձեռամբ, Արև, Լուսին, Զինուոր, Աստղ, Ոմն և Ռումբ 2 ամսական 4. 75-էն 66. 50, Մխիթար և իր ձեռամբ, Ղազար, Եղւարդ և վահան 2 ամսական 4. 75-էն 19, Եզնիկ երեք ամս. 57, Զինուորականի ձեռամբ No 2952 ընկալագրով Գնդակ 10, Վառօդ 103, Սամուէլ 20, Կայծակ խմբ. 28, Կայծակ 25, Ա. Կ. Ընկերներ 16, Մխիթար և իր ձեռամբ No 2953 ընկալագրով Ղազար և Եղւարտ 57, Վահան, Գրիգոր, Մկրօ և Սամսօն ամս. 4. 75-էն 19, Տ. Թ. և իր ձեռամբ, Լ-Ն, Պ-Խ, Ի-Թ և Խ-Պ No 2954 ընկալագրով մէկ ամս. 9. 50-էն 57, Երկաթ 2 ամս. 40, Տ-Թ, Լ-Ն, Ե-Հ, Պ-Խ, Ի-Թ, Խ-Պ 2 ամս. 114, Զինուորական և իր ձեռամբ, Արև, Լուսին, Աստղ, Ոմն, Զինուոր և Ռումբ մէկ ամսական 9. 50-էն 66. 50, Վառօդ No 2955 ընկալագրով 9. 50,

